№ 245 ԿԻՐԱԿԻ, 6 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1911 ԿԻՐԱԿԻ, 6 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 245

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Նոյեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 2 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պետք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, նոյեմբերի 7-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ
Դրամա 5 արար., իշխան Սումբատովի, թարգմ. Զ. Տէր-Գրիգորեանի

Մասնակցում են՝ տ. տ. Գուլազեան, Զարէլ, Մայսուրեան, Ցամիկ, Սիրանոյշ, պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Ալիխանեան II, Աղայեան, Աւետեան, Լաքս, Ղազարեան, Մանուէլեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Շահխաթունի, Սեւումեան և Փիրումեան։
Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները սովորական են։

Ռեժիսոր՝ Յ. ԱԲԷԼԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Ք. Սարգսեան, Գ. Երիցեան

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ
յայտնում է ի գիտութիւն պ. պ. ընտրողների, որ այսօրվանից, կիրակի, նոյեմբերի 6-ից կը սկսվեն տրվել
ՄՈՒՏՔԻ ՏՈՄՍԱԿՆԵՐ

ընտրական ժողով մտնելու համար: Տոմսակները տրվում են Ուպրավայի գլխատանը ամեն օր՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև ցեր. ժամը 3-ը, իսկ կիրակի օրերը՝ առաւ. ժամը 11-ից մինչև ցեր. ժամը 2-ը: Տոմսակներ ստանալու համար ընտրողներն անձամբ պիտի ներկայանան: Ընտրութիւնների օրը տոմսակները կը տրվեն ընտրական դահլիճի մուտքի մօտ՝ առաւօտ. ժամը 9-ից սկսած։

Ընտրողների շահերի տեսակէտից՝ Ուպրավան թախանձագին խնդրում է մուտքի տոմսակները ձեռք բերել վաղօրօք, որպէսզի յարմարութիւն լինի պարզել մուտքի տոմսակ ստանալու իրաւունքն ունենալու վերաբերմամբ ծագած որեւէ թիւրիմացութիւն: Միենոյն ժամանակ այն անձերը, որոնք լիազօրագրականներով կամ հաւատարմագրերով ստանձնած ունին ընտրական իրաւունք, նոյնպէս և խնամատար և ներկայացուցիչ անձեր, պարտաւորեն շուտով ներկայացնել Ուպրավային համապատասխան դոկումենտները, որպէսզի կարելի լինի վաղօրօք կազմել այդօրինակ անձերի անուանացուցակը և յայտարարել ի գիտութիւն ընտրողների։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԵՆ

Նոյեմբերի 20-ին—I ընտրական մասում (քաղաքային «Աշխատանքի Բօրսայի» շինութեան մէջ), և II ընտր. մասում (քաղաքային դումայի դահլիճում):

Նոյեմբերի 27-ին—III ընտր. մասում (Հալաբարի կլուբի շինութեան մէջ) և IV ընտր. մասում (Խարփուխի քաղաքային դպրոցում):

Դեկտեմբերի 4-ին—V ընտր. մասում (Քաղաքային Ժողովրդական Տանը):

Դեկտեմբերի 11-ին—VI ընտր. մասում (Նախալօվկայի քաղաքային դպրոցում, առին Բոտէի) և VII ընտր. մասում (Աւլաբարի դպրոցի շինութեան մէջ):

Ընտրութեան կարգ ու կանոնի վերաբերեալ հրահանգը կը յայտարարվի առանձին։

ՄԻ ՊԱՏՈՒԻՐԷՔ ԿՕՇԿԵՂԷՆ
ՆԱԽ ՔԱՆ ՉԸ ՄՏԱԾ
Ա. Ս. ԳԻՐԳԻԴՕՎԻ
ԿՕՇԿԵՂԷՆԻ ՀԱՐՈՒՍՏ ԽԱՆՈՒԹԸ
Դվօրցօվայա փող. № 3. = II բաժանմունքը՝ Միխայլօվսկի պր., 100.
Ֆիրման գոյութիւն ունի 1875 թից:

Պօստով ամեն օր ստացվում են ամենավերջին տեսակի սեզօնային նորոյթներ Լօնդօնից, Վիէննայից, Բերլինից և Սաքսօնիայից։ Խանութում՝ Թիֆլիսում դեռ չեղած՝ խոշոր քանակութեամբ և ընտիր կօշկեղէնի պաշար գոյութիւն ունի։
«ՎԵՐՆԻԿ և ԸՆԿ.» ֆիրմայի աշխարհահռչակ ամենալաւ արդիւնաբերութիւն։
«ՍԿՕՐՕԽՕԴ» Ս.-Պետերբուրգի մեխանիկական ֆաբրիկայի ամենաամուր արդիւնաբերութիւն։
Վիէննայի «ԵՂԲ. ԼԻՍԻԱՆՍԿԻՆԵՐԻ» ֆաբրիկայի էլեգանտ և շքեղ կօշկեղէն։
Լօնդօնի «ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ» ֆաբրիկայի անգլիական կօշկեղէն։
Նոյնպէս և արտասահմանեան և ռուսական ֆիրմաների կօշկեղէն։
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ
Ռուս.-Ամերիկ. Ռէզին. Մանուֆակտ. Ընկ. «ՏՐԵՈՒԳՕԼՆԻԿ»։

(Ն.) տտ. 1062. 2—1

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
ՎԱՃԱՌՈՒՄ Է
Զախարիյ Բարատովի նախկին ԱՆՏԱՌԱՅԻՆ
„ՄՋՎԱՐԵՏԻ" ԿԱԼՈՒԱԾՔԸ

255 դեսեատին և 670 քառ. սաժէն տարածութեամբ, որից $234^{1}/_{4}$ դեսեատինը ծածկված է անտառով, գլխաւորապէս ամուր տեսակի ծառերով 60—80 տ. հասակի, $20^{1}/_{2}$ դեսեատինը մարգագետին է, իսկ 1420 քառ. սաժէնը՝ ուղիներ։ Կալուածքը գտնվում է Թիֆլիսի գաւառում, Թիֆլիսից 60 վերստ՝ իսկ Բէլիյ-Կլիւչից 7—8 վերստ հեռաւորութեան վրա։ Մանրամասն տեղեկութիւնները կարելի է ստանալ լի օրերը՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 3-ը Պետական Բանկի Թիֆլիսի Գրասենեակի Դիւանատանը։

Կառավարիչ՝
ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Դրան կամերգեր Դ. ԲԷԺՕԲՐԱԶՕՎ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ
ԺՈՂՈՎՐԴ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ. ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱ.
Այսօր, կիրակի, նոյեմբերի 6-ին Հայոց Դր. Ընկ. Թատերասէրների խումբը Մասնակցութեամբ դերասանների կը ներկայացնէ
ՅԻՄԱՐԸ
Կատակերգութիւն 4 արար., Ֆուլդի, թարգմ. Տ. Յովհաննիսեանի
Մասնակցում են. տ. տ. Դոբեան-Արմէնեան, Եարալեան-Ստեփանեան, Մանուչարեան, Արուսեակ, օր. Մարգարիտ, պ. պ. Արմէնեան, Ահարոնեան, Գրիգորեան, Գաւրօշ, Թաշճեան, Հայկազեան, Մոսեան, Շաւարշ, Փիրումեան և ուրիշները։
Սկիզբն է ճիշդ ժամը 8-ին երեկ.
Ռեժիսոր՝ Յ. Աբէլեան
Հերթ. կարգադրիչ՝ Գ. Երիցեան
ԱԶԴ.—Ուրբաթ, նոյեմբերի 11-ին, Ա. Արմէնեանի բենեֆիսին կը ներկայացվի յայտնի պիէս «ՏԱՅՖՈՒՆ»։
(տտ.) 1060. 1—1

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ
Յ. ՄԻՐԱՔԵԱՆ
ՊԱՐԻԶԻՑ
Վկայեալ Ֆրանսիական Հանրապետութեան նախագահութեան EG. PIROU լուսանկարչատան—Պարիզում։
Ժամանակակից ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ
Սերգիեվսկայա, 4.
PHOTOGRAPHIE D'ART.
տտ. 1055. 5—1

ФАБРИКИ
А.ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦѢНА
25шт.15к.
10ш.6к.100ш.60к.

ПАПИРОСЫ
ЛЕВЪ
20шт.
5коп.
ФАБРИКИ А.ЭНФІАДЖІАНЦА

ПАПИРОСЫ
ЭКСТРА
15шт.
6коп.
ФАБРИКИ
А.ЭНФІАДЖІАНЦА

100—60 662. տտ. (Ն. Ն. Կ.)

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի։
Սրսկումներ նաև տուբերկուլիններով:
Ընդունելութիւնը ամեն օր՝ առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10.
(Ա.Օ.) տտ. 989. 100—22

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանօվսկայա փողոց, տուն Սէյլանովների, № 18, տելեֆօն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(Ն.Հ.Կ.) տտ. 819. 100—26

ԹԻՖԼԻՍ—ԷՍՍԵՆՏՈՒԿԻ (ամառը)
ԲԺԻՇԿ Ա. Մ. ՄԿՐՏՉԵԱՆՑ (ուրգի)
Նախկին ասիստենտ Մ. Կ. Հ. կնախօս. կլին. հիւանդ.:
Ռեօկուր. Ֆիզիքական և օպերատիվ միջոցներ:
Ամեն օր՝ երեկ. ժամը 5—6-ը (բացի կիրակի օրերից): Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը առաւ. ժ. 11—12-ը (վաղօրօք պիտի գրվել):
Բէբուտօվսկայա, 58. Տելեֆօն № 230.
(Օ.Մ.) տտ. 1061. 10—1

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ չղային հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր (ցերեկվայ ժամը 12—1.
(երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կոչուբէեվսկայա փող. № 22, Ելիզավէտինսկայա փողոցից՝ № 44 տան անկիւն։
(Ն.Հ.Կ.) տտ. 243. 100—88

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին: Պլոմբ, արհեստական ատամներ իւրաքանչիւրը 1 րուբլի, և այլն:
Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ:
Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.
Միքայէլեան փող. № 6, մուտքը պերէուլկայից:
(Ն.Հ.Կ.) տտ. 876. 50—25

Տնային բժշկութիւնը աժան է նստում և քիչ էլ ժամանակ է խլում։ Շաքարային հիւանդութիւնների համաշխարհային յայտնի հետազօտող պրոֆ. դօքտոր Կօնտանը հաստատել է հետևեալ երևոյթը. ՖՐԱՆՑ-ԻՕՍԻՖԻ իսկական դառն ջուրը սոված փորով ընդունելու ժամանակ ներգործում է ոչ թէ միայն որպէս մեղմ լուծողական, այլ և ընդհանրապէս կանոնաւորում է մարսողութիւնը, այնպէս որ նա բոլորովին փոխարինում է Կարլսբադի հանքային ջրերը։
(M. 199751) 511. 1—1

ԸՆՏՐԱԿԱՆ ԱՆՈՐՈՇՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի ամիս է մնում մինչև կաթողիկոսական ընտրութիւնները. բայց հրապարակի վրա մնում են մի շարք անորոշութիւններ՝ վերաբերեալ ընտրական գործին։

Մենք չը գիտենք, թէ ինչ մասնակցութիւն պէտք է ունենան Թիւրքահայերը կաթողիկոսական ընտրութեան մէջ։ Եւ իրանք Թիւրքահայերն էլ ներկայումս անորոշութեան վիճակի մէջ են։ Նրանք ընտրել են շատ տեղերում պատգամաւորներ ռուսահայերից, յոյս ունենալով որ վերջիններս կարող կը լինեն նրանց ներկայացուցիչները լինելու. իսկ նոր պաշտօնական բացատրութեամբ այդպիսի ներկայացուցչութիւն չէ ճանաչվում իբրև օրինական, որովհետև պատգամաւորը իր՝ թեմի մարդկանցից չէ։

Մեզ հաղորդում են, որ Էջմիածինը խնդրամատոյց է եղել վերականգնել նախկին կարգը այս անգամվայ համար, որովհետև ժամանակ չը կայ իմաց տալու հեռաւոր թեմերին եղած կարգադրութեան մասին և ուստի նրանք կարող են զրկվել իրանց ընտրական ձայնից։

Կը յաջողվի թէ չի յաջողվի այդ դիմումը—չը գիտենք, բայց որքան դժուար կացութիւն կարող է ստացվել այն տեղերի համար, որոնք յոյս ունենալով, թէ իրանք արդէն ունեն ներկայացուցիչ, հոգ չեն տանի ընտրելու նոր պատգամաւոր։

Նոյն անորոշութիւնը վերաբերում է գաղտնի և բաց քուէարկութեան խնդրին։ Վերջին անգամվայ կաթողիկոսական ընտրութեան ժամանակ գործադրվեց մի խառն ձև, որը վերջնական արդայայտութեամբ կրում էր բաց քուէարկութեան բնաւորութիւն։ Այժմ որքան լսվում է, ընտրութիւնը պէտք է լինի բոլոր աստիճաններում փակ, բայց դեռ բոլորովին պարզորոշ յայտնի չէ խնդիրը։

Ընտրութեան ուրիշ գործողութիւններ եւս պարունակում են հարցական կէտեր. օրինակ՝ հաւատարմաթղթերի, անձնափոխանորդների, կրկնակի քուէներ ունենալու խնդիրները։

Անյարմար մի բան է, երբ ընտրութեան կանոնները խախուտ հիմքերի վրա են դրված և կարող են հակասական մեկնաբանութիւնների տեղիք տալ։ Այդ անորոշութիւնը և երերեալ դրութիւնը շատ մեծ թիւրիմացութիւնների առիթներ է տալիս։

Վաղուց ընտրութեան գործը կարիք էր զգում վերաքննութեան, վերամշակութեան և նոր խմբագրութեան, որը նախատեսած լինէր գործնական կեանքի եթէ ոչ ամենամանրակրկիտ, գոնէ գլխաւոր առանձնայատկութիւնները։

Եթէ մինչև այժմ չենք հոգացել մշակելու ընտրութեան վերաբերութեամբ խելացի կանոններ, գոնէ այժմ պէտք է ձեռնարկենք գործի և պատրաստենք նոր կանոնների ծրագիր, որին ընթացք տայ նորընտիր կաթողիկոսը և դրանով վերջ դնի այն անակնկալներին, որոնք հանդէս են գալիս անժամանակ, երբ մարդիկ այլևս անկարող են միջոցներ ձեռք առնել իրանց իրաւունքները պաշտպանելու համար։

Եւ արդարև՝ մարդիկ արդէն պատրաստվում են Էջմիածին գնալու և հեռաւոր տեղերում ապրողները գուցէ նոյնիսկ ճանապարհ են ընկել իրանց բնակավայրերից, իսկ մենք դեռ եւս որոշակի չը գիտենք թէ ինչ իրաւունքներ են վերապահված ընտրական ասպարէզում։

Մենք հայերս անցեալներում եւս գանգատվել ենք ընտրական կարգերի անբաւարար վիճակի մասին, բայց դժբախտաբար մինչև այժմ չենք կարողացել բարուոքել դրութիւնը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 նոյեմբերի

Լիվադիա.—Երէկ Մեծ Իշխանուհի Օլգա Նիկոլայեւնայի ծննդեան օրը պատարագից յետոյ կայացաւ ճաշ պալատում։ Ներկայ էին Նոյին Մեծութիւնները և բարձրաստիճան անձեր։ Մեծ Իշխանուհիները մասնակցեցին պարերին։

—

Վիէննա.—Յունաց թագաւորը այցելեց Էրենտալին և մնաց նրա մօտ մի ժամ։

«Ցէյտի» տեղեկութիւնների համաձայն, իտալական զինուորական կցորդը դիմել է զինուորական մինիստրին ու բացատրութիւն խնդրել Բոսնիայում ձեռնարկված զօրաժողովի վերաբերութեամբ։ Մինիստրը պատասխանել է, թէ ոչ Բոսնիայում, ոչ Աւստրո-Ունգարիայի մի այլ տեղում ձեռք չեն առնված այնպիսի միջոցներ, որոնք իբրև զօրաժողով նկատվէին։

«Վինէր-Աբէնդպօստը» հաղորդում է, որ արքիդուքս Ֆերդինանդ-Կարլը արտասահմանում ամուսնացաւ առանց կայսրի թոյլտուութեան, որ արդէն համաձայնեց թոյլ տալու արքիդքսին հրաժարվել տիտղոսից ու պաշտօնից։ Արքիդուքսը անուանվելու է Ֆերդինանդ Բուրգ։

—

Թաւրիզ.—Անջումանի խաղաղ բանակցութիւնները քաղաքը պաշարող Շուջա-ուդ-Դովլէի հետ վերջացան անհետևանք։

—

Բուշիր.—Շիրազ հասաւ հնդիկ հեծեալ երկու զօրագունդ։

—

Բեռլին.—Բիւջէտային մասնաժողովի մէջ յետագայ վիճաբանութիւնների ժամանակ սօցիալիստ-հռետորները մատնանշում էին, թէ Գերմանիան պէտք է Ֆրանսիայի և Անգլիայի վերաբերութեամբ խաղաղասիրութիւն երևան հանէր։ Կենտրոնի ներկայացուցիչները, հաւանութիւն տալով գերմանական դիպլօմատիայի վարմունքին, լիբէրալ և պահպանողական հռետորների հետ միասին դատապարտում էին դէպի մամուլը ցոյց տրված վերաբերմունքը, որին իրազեկ չէին դէպքերի ընթացքին։

—

Լիսաբոն.—Պալատի նստաշրջանը վերսկսվեց։ Մինիստր-նախագահը կարդաց դեկլարացիան, որի մէջ ասված է, թէ Պորտուգալիան ամենալաւ յարաբերութիւնների մէջ է մեծ պետութիւնների հետ։ Անգլիայի հետ դաշնակցութիւնը կը պահվի, կառավարութիւնը վարելու է հակակղերական քաղաքականութիւն, միևնոյն ժամանակ յարգանքով վերաբերվելով դէպի բոլոր դաւանութիւնները անխտիր։

—

Բեռլին.—Բիւջէտային մասնաժողովի մէջ Կիդերլէն-Վեխտէրը հաւաստիացուցիչ տեղեկութիւններ տուեց ֆրանս-գերմանական բանակցութիւնների մասին։

ԵՐԿՐԱՇԱՐԺ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 նոյեմբերի

Բեռլին.—Երեկոյեան ժամը $10^{1}/_{2}$-ին Էրֆուրտում, Միւնխէնում, Շտուտգարտում, Ստրասբուրգում, Մայնում, Ֆրանկֆուրտում զգացվեցին ստորերկրեայ հարուածներ։ Իրերը շարժվեցին, մարդիկ վայր ընկան։ Զանազան տեղերում երևացին ճեղքուածներ։

Պաշտօնական։ Միւնխէնում ժամը 10 և 25 ր. զգացվեց ուժեղ երկրաշարժ. սէյսմօգրաֆը ընկաւ։ Ռոտվէյլում ժամը 10 և 25 ր. եղաւ ուժեղ հարուած։ Ազգաբնակութիւնը ահ ու սարսափով դուրս վազեց փողոց։ Տների վրայից ընկնում էին աղիւսները։ Երկինքը սկսեց կայծակել։ Կոնստանցում երկինքը շառագունեց։ Միլանում և մերձակայ տեղերում նոյնպէս երկրաշարժ է եղել։

Բավարիայի, Սակսօնիայի, Վիւրտէնբերգի, Տիրոլի, Սակսօն-Կօբուրգի, Զիգմարինգէնի, Էլզաս-Լօթարինգիայի բազմաթիւ վայրերից տեղեկութիւններ են ստացվում երկրաշարժի մասին, որը սակայն նշանաւոր վնասներ չէ պատճառել։ Ամբողջ Շվէյցարիայում երկրաշարժը տևել է 10 վայրկեան՝ արևմուտքից—արևելք ուղղութեամբ։ Բեռնի և Ցիւրիխի թատրոններում տեղի է ունեցել իրարանցում. հասարակութիւնը գրոհ է տուել դէպի փողոց, ջարդելով պատուհանները. շատերը ուշաթափվել են։

Երկրաշարժը առանձնապէս խիստ է եղել Վիւրտեմբերգում։ Շատ տեղերում ազգաբնակութիւնը փողոց է վազել։ Էբինգէնում բաց երկնքի տակ հաւաքվել են կրակի շուրջը 500 մարդ։ Էբինգէնի երկաթուղային հաղորդակցութիւնը խափանվել է՝ գետնի վրա ճեղքեր գոյանալու պատճառով։ Երկրաշարժի ալիքը հասած է մինչև Մագդէնբուրգ։

—

Պարիզ.—Երէկ ժամը 9 և 20 ր. երեկոյեան Վէզուլում, Էպինալում, Բէլֆօրում, Պօնտարլիէում զգացվել է երկրաշարժ։

ՉԻՆԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 նոյեմբերի

Շանխայ.—Գեներալ Ջժանը ամրացրեց Պուգօուշին և աշտարակների վրա դրեց 30 թնդանօթ։

Հոկտեմբերի 31-ին Խանկօու մտան 12,000 զինուոր։ Յեղափոխականներն անցան Խան գետը ու գրաւեցին Խանկօուի մօտերը գտնվող դիրքերը։ Կառավարական զօրքերը փորձեցին յետ նեղել նրանց, սակայն ապարդիւն։ Կառավարական զօրքերի թիւն է 4000 մարդ։ Դրութիւնը կրիտիկական է։

Ապստամբները գանգատվում են, որ օտարազգի պետութիւններից մի քանիսը օգնում են մանջուրներին։ Նանկինը կտրված է շրջակայքից։

Կառավարական զօրքերը բռնում են ծամ չունեցողներին և գլխատում են։ Գլխատվածների թւում են ուսանողներ։

Լուրերի համաձայն Ջժանը համաձայնել է անցնել յեղափոխութեան կողմը 700,000 տաէլ վարձատրութեամբ, բայց ապստամբները հակառակ են։

Երկու չինական ռազմանաւ զօրքերով Շանխայի զինանոցի մօտից դիմեցին Ցզին-Ցզիան։ Այստեղ կասկածելի նաւերը ենթարկվում են քննութեան։

—

Գուանչենդզի.—Քաղաքից 10 վերստ հեռաւորութեան վրա չինական ոստիկանութիւնը ընդհարվեց 40 խունխուզների հետ։ Սպանվել են երկու խունխուզ, մնացածները ցրվել են։

Տեղական կոմիտէտը դաօտայ Մինիայի նախագահութեամբ անկախութիւն յայտարարեց։ Փող չը ստանալու պատճառով կոմիտէտը որոշեց տալ ռոճիկները զօրքերին ու ոստիկանութեանը անտառային բիւրոյի կառավարական բանկի գումարներից։

—

Պէկին.—Խուգուանի գեներալ-նահանգապետ նշանակվեց երկրորդ զօրաբանակի հրամանատար Դուանցիժուլը հրաման ստանալով մասնակցել ապստամբութիւնը ճնշելու մէջ։ Ժող. լուս. մինիստրի օգնական նշանակվեց Պէկինի համալսարանի ռեկտոր Լիւգինշէնը։ Չինական մամուլը դժգոհ է ներկայ կաբինէտից, որ բաղկացած է Իւանշիկայի նախկին գործակիցներից։

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԸ ՊԱՐԻԶՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 նոյեմբերի

Պարիզ.—Ելիսեան պալատում ի պատիւ սերբիական թագաւորի կայացաւ ճաշ Ֆալիէրի, մինիստրների, պալատների նախագահների, դիպլոմատիական մարմնի, բարձրաստիճան զինուորական ու քաղաքացիական պաշտօնեաների, քաղաքական գործիչների. մամուլի ներկայացուցիչների ներկայութեամբ։

Ֆալիէրը իր բաժակաճառում ասաց, որ Սերբիան խաղաղ աշխատանքի ժամանակ ձգտում է զարգացնել իր հզօրութիւնը ու բարեկեցութիւնը. Ֆրանսիան և Սերբիան պահպանում են սրտագին յարաբերութիւններ և բարեկամութիւն։

Թագաւորը շնորհակալութիւն յայտնեց Ֆրանսիայի տրադիցիօն բարեացակամութեան համար. Սերբիան բաղդաւոր է լսել, թէ իր յոյսը նա կարող է դնել Ֆրանսիայի մեծարժէք աջակցութեան վրա, եթէ ապագան որոնէ խաղաղ աշխատանքի մէջ. Ֆրանսիայի բարեկամութիւնը համապատասխան է Սերբիայի լաւագոյն տրադիցիաներին։

Դէ-Սէլվի մօտ կայացաւ նախաճաշ ի պատիւ սերբիական թագաւորի՝ Ֆալիէրի, մինիստրների, սենատի և պալատի նախագահների, քաղաքային վարչութեան և գիտութեանց ճեմարանի ներկայացուցիչների ներկայութեամբ։

Սերբիական թագաւորին և նախագահին քաղաքային վարչութեան մէջ հանդիսաւոր կերպով ընդունելու ժամանակ քաղաքային խորհրդի նախագահը և Սէնա դեպարտամենտի քաղաքապետը ողջունեցին թագաւորին և սերբ քաջարի ժողովրդին։ Թագաւորը, պատասխանելով յիշեց այն համակրանքների մասին, որ կապում են Ֆրանսիային Սերբիայի հետ, որոնք համահաւասար հիմնված են ազատութեան, հաւասարութեան ու արդարութեան սիրով։

ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

4 նոյեմբերի

Տրիպոլիս.—Վատ եղանակը շարունակվում է։ Պատերազմական և առևտրական նաւերը բաց ծով են դուրս գալիս։ Իտալական արտիլերիան ցիրուցան արեց ուղտերի կարաւանը։ Պահակ-զինուորները օազիսի զանազան տեղերում գտան 10,000 փամփուշտ։

Երեք օր շարունակվող հեղեղի պատճառով Ուէդ-մէդջէնին գետը վարարեց։ Քաղաքը ջրի մէջ է։ Զօրքերը յետ քաշվեցին և դիրքեր գրաւեցին Բումէլիանում։

—

Հռոմ.—Ստեֆանիի գործակալութիւնը հերքում է այն տեղեկութիւնը, թէ իտալական նաւատորմը երևացել է Դարդանէլում։

—

Աթէնք.—Աթէնքի Հեռագրական Գործակալութիւնը հերքում է «Օսմանիշեր Լլօյդի» տեղեկութիւնը, իբր Յունաստանը դիմել է մեծ պետութիւններին, բողոքելով որ Իտալիան մտադիր է պատերազմական գործողութիւնները փոխադրել Եգէյեան ծովը։

—

Սօֆիա.—Թիւրք փախստական զինուորների և մակեդոնացի փախստականների թիւը կրկնապատկվում է։ Միայն Կիւստենդիլում նրանց թիւը հարիւրից անց է։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓՆԵՐԷՆ

Նոր տագնապ

Կ. Պօլիս, 24 հոկտեմբեր

Պատերազմը մոռցուեցաւ։

Թիւրքիա նոր ճգնաժամի մը մէջ է հիմա։ Օսմ. սահմանադրական ըէժիմին անկիւնաքարը, անոր մեծագոյն պաշտպանը, փրկիչն ու ազատարարը նկատուած Մահմուդ-Շէվքէթ փաշա Հակկը փաշայի վիճակին ենթարկուելու վտանգին տակն է։ «Մահմուդ Շէվքէթ փաշա պիտի տապալի թէ ոչ», ահա հարցը, որ ամենուն շրթունքին վրայ է, և ամեն մարդ երկու օրէ ի վեր կը սպասէ այն օրուան, ուր պատերազմական մինիստրը խորհրդարանին ներկայանալով բացատրութիւն պիտի տայ իր երեսփոխան մը ձերբակալելու հակասահմանադրական ձեռնարկին համար։

Ոմանք զինքը յանցաւոր կը նկատեն, այլք անմեղ։ Ամեն պարագայի մէջ սակայն բան մը կայ, որ անժխտելի է. անիկա իր չափազանց յանդգնութիւնն է, որ այսօր գէթ ձևականապէս իր դէմ կը հանէ իր ամենէն մեծ պաշտպանը՝ Իթթիհադը։

Մահմուդ Շէվքէթ փաշա արդարակորով, ուղղամիտ ու ճշմարտապէս սահմանադրական մարդու մը համբաւը հանած է։

Իր գործունէութիւնը և խառնը իրաւամբ զինքը սիրելի ըրած են հանրութեան և տուած են իրեն բացառիկ դիրք մը, որ ոչ ոք ունեցած է թերևս անցեալ և ներկայ ժամանակաց մէջ։

Հակառակ անոր, որ շատեր կը վախնային իր դիկտատոր մը ըլլալէն, Մահմուդ Շէվքէթ փաշա հեռու մնաց այս տեսակ միտումներէ և հակումներէ և միշտ զգուշաւոր ընթացք բռնեց։

Մինչև Տրիպոլսոյ պատերազմին նախընթաց օրը իր վրայ ամենուն համոզումը անսայլայլ էր, և իր անձը գրեթէ բարձր կը մնար ամեն կուսակցութենէ և հաւասարապէս կը յարգուէր։

Պատերազմի յայտարարութեան հետ, երբ տապալեցաւ Հակկը փաշայի դահլիճը, շատերը անոր չափ պատասխանատու համարեցին պատերազմական մինիստրը իբր անփոյթ ու պարապզանց և անուշադիր։

Սայիդ փաշա սակայն խոհեմութիւն չհամարեց զՄահմուդ Շէվքէթ փաշա լքանել և դարձեալ անոր յանձնեց պատերազմական մինիստրի պաշտօնը։

Սայիդ փաշայի վստահութեան քուէ տալու համար թէև պայման դրուած էր հին մինիստրները ամենն ալ հրաժարեցնել, սակայն ի վերջոյ տեղի տրուեցաւ և հետզհետէ այդ փոփոխութիւնները ընել որոշուեցաւ։

Մահմուդ Շէվքէթ փաշա մնաց դահլիճին մէջ, սակայն զերծ չմնաց հանրային քննադատութենէն, որուն արձագանգ դառնալ սկսան ընդդիմադիր թերթեր։ Մասնաւորապէս այս շարժումը կը վարէ Դերսիմի երեսփոխան Լիւթֆի-Ֆիքրի, որուն հրատարակած «Թանզիմաթ», «Թազմինաթ», «Մաարուաթ» և այլ բազմաթիւ անուններով թերթերը ամեն օր կը խափանուէին պատերազմական ատեանին կողմէ՝ ընդհանրապէս կառավարութիւնը, մասնաւորապէս մեծազօր փաշան քննադատած ըլլալուն համար։ Ոչ միայն թերթը խափանել, այլ անոր թիւերը հաւաքել սկսան և ոստիկանական ույժ գործածեցին։

Լիւթֆի-Ֆիքրի ալ իր կողմէն բուռն միջոցներու դիմեց, անտեսելով պատերազմական ատեանին դէմ և շարունակել փորձելով իր խափանեալ թերթերէն մէկը։

Պատերազմական ատեանը, կերևայ թէ, այս «անառակ որդի»-ին հետ տեսնալով որ ուրիշ կերպով չպիտի կարենայ պայքարիլ՝ կորոշէ սահմանադրական օրէնքին հակառակ Լիւթֆի-Ֆիքրին ձերբակալել։

Շաբաթ առաւօտ, Այ-Ստեֆանօյէն Կ. Պօլիս եկած պահուն, սպայ մը և ոստիկաններ կը փորձեն զինքը ձերբակալել։

Լուֆթի-Ֆիքրի կընդդիմանայ, չի հետևիր զինքը ձերբակալելու աշխատողներու և ձևով մը կը հասնի խորհրդարան, ուր իր շուրջը հաւաքելով բոլոր ընդդիմադիրները՝ կը պատմէ իրողութիւնը։ Կորոշուի այդ գումարման մէջ նոյն օրն իսկ հարցապընդում ուղղել մինիստրութեանը՝ երեսփոխանի անձնական անբռնաբարելիութեան սահմանադրական տարրական իրաւանց դէմ եղած այս բռնաբարութեան համար։ Իրենց հարցապնդումը ժողովին ներկայացնելէ առաջ զայն կը ներկայացնեն նաև Իթթիհադի անդամներուն, որոնք այս բացորոշ իրողութեան հանդէպ իրենց ձեռնպահութիւնը մեղսակցութիւն մեկնել չտալու մտադրութեամբ՝ կը համակերպին և իրենք ալ կը փութան ստորագրել, պայման դնելով միայն, որ փոխանակ ամբողջ դահլիճին ուղղելու հարցապնդումը՝ միայն պատերազմական մինիստրին ուղղուի։

Այս բարեփոխումը կամ մեղմացումը կընդունին ընդդիմադիրներէն։

Հարցապնդումը կը տրուի և տագնապը կը սկսի նոյն օրը։ Մահմուդ Շէվքէթ փաշա մինչև գիշերուան մէկ առաջացեալ պահը կը սպասէ երեսփոխանները և ինքը չի ներկայանար։

Իթթիհադի անդամները, հակառակ անոր՝ որ ստորագրած են հարցապնդումի առաջարկը, այնպիսի դիրք մը կը բռնեն, որ կարծես թէ ուրիշ նպատակ չունէին, եթէ ոչ նուաստացնել գործին կարևորութիւնը։ Խմբովին կը մեկնին իրենց ժողովին մեծամասնութիւնը ջնջելու և հարցապնդման առաջարկին նկատառումը յետաձգելու համար ուրիշ օրուան մը. հակառակ ընդդիմադիրներու յամառօրէն իրենց աթոռներուն կառչելու և այն գիշերը մինիստրը լսելու հաստատ մտադրութեան, Իթթիհադը յաջողեցաւ իր խօսքը քալեցնել, և ժողովը ցրուեցաւ առանց Մահմուդ Շէվքէթ փաշան լսելու։ Այսով Իթթիհադը ձևականապէս հարցապնդելով հանդերձ մինիստրը՝ միւս կողմէն ժամանակ կուտար անոր փախուստի ճամբաներ որոնելու։

Շէվքէթ փաշա, կըսուի թէ, չորեքշաբթի օրը պիտի տայ իրմէն պահանջուած բացատրութիւնը։ Սակայն հիմակուընէ սկսած է Իթթիհադի շարժումը։ Մեծամասնութեան կուսակցութեան անդամները շարունակ իր քովը կերթան կուգան, ելք հնար մը փնտռելու համար։

Սայիդ փաշան իր անտեղեակ ըլլալը յայտնելով բովանդակ պատասխանատուութիւնը կը թողու պատերազմական մինիստրին վրայ, որ, զրոյցի մը համեմատ, առաջուց ապահովութիւն կը պահանջէ իր վստահութեան քուէի արժանանալուն, եթէ ոչ առանց խորհրդարանին ներկայանալու որոշած է հրաժարիլ։

Ամեն պարագայի մէջ սահմանադրական ըէժիմին նեցուկը համարուած անձնաւորութեան մը այս կերպով իբր հակասահմանադրական տապալելը վտանգ մըն է սահմանադրութեան համար, վասնզի Մահմուդ Շէվքէթ փաշան, եթէ իրապէս դիկտատոր դառնալ կը նկրտի, ինչպէս կամբաստանեն, իր յաջողութիւնը անվրէպ է, վասնզի իրեն հետ ունի բանակը, որ միակ նեցուկն է օսմանեան սահմանադրութեան։ Միւս կողմէն՝ այս միջադէպը ապացոյց մըն է, թէ Թիւրքիոյ մէջ ամենէն սահմանադրասէր կարծուած մարդիկը ինչպէս կըմբռնեն սահմանադրութիւնը և որչափ սահմանադրական կրնան ըլլալ։

Մնացեալներուն վրայ մտածել ձեզի կը թողում։

Շառայլ

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մերսին, 17/30 հոկտեմբեր

Կիլիկիոյ վեհ. կաթողիկոսը որոշած էր միւռոնօրհնութիւն կատարել յառաջիկայ Գիւտ Խաչի տօնին։ Սակայն վերջին պահուն, աչքի առաջ ունենալով երկրին ներկայ տագնապալի կացութեան պատճառաւ ուխտաւորներու վարանումը, նոր յայտարարութեամբ մը անսահման յետաձգուեցաւ հանդէսը։

Սրբազան կաթողիկոսը մեծ յոյսեր դրած էր այս հանդէսին վրայ։ Սսի պատմական եկեղեցին—Ս. Երրորդութիւն—որ ժամանակին կիլիկեան թագակիրներուն պալատական աղօթատեղին էր (հասարակութեան պատկանողը կը գտնուէր այժմու եղածին մօտիկ դէպի հիւսիս, որուն մինակ մէկ անկիւնը կը մնայ դեռ կանգուն), ժամանակին և թշնամիներու աւերէն խոցոտուած՝ պէտք ունի կանոնաւոր նորոգութեան մը։ Թէև, ինչպէս դրան յիշատակարանէն կը հասկցուի, Կիրակոս կաթողիկոսը ՌՄԾԹ թւին (եթէ չեմ սխալիր՝ 1800-ին) ձեռնարկած է եկեղեցիին արևմտեան մասին, զանգակատան վերաշինութեան և միջի նորոգութեան, բայց չէ յաջողած գլուխ բերել։ Զանգակատան այդ մասը, իր արդի վիճակովը, աչք ծակող հակասութիւն մը կը կազմէ եկեղեցիին մնացած հին մասերուն հոյակապ և բերդի մը չափ ամուր շինութեանց հետ. և մեծապէս գնահատելի բարեգործութիւն մը պիտի ըլլար ազգային այնքան նուիրական այդ յիշակերտին այդ մասին՝ իր հնագոյն ձևովը՝ վերանորոգութիւնը։

Ներսի ծեփերն ու պատերուն ջնարակուած զարդանկարուն քառակուսի քարերով ծածկեալն ևս կիսաւարտ մնացած, բարերար սիրտերու կը սպասեն աւարտուելու համար։

Ու՞ր էր թէ մեր Էջմիածնին նորոգութիւնները յիշող ազնիւ և վեհանձն հոգիները, պա՛հ մըն ալ, աչքէ հեռու—սրտէ ալ հեռու—Սսի կաթողիկոսանիստ մայրավանքն յիշէին, որ մեր վաղալաց և շիջած յառին փառքերուն միակ կենդանի վկան կը մնայ հոն, աւերակաց դաշտին այս երկրին մէջ։

Ամիսէ մը ի վեր ամենուրեք դպրոցները բացուիլ սկսած են։ Կանոնաւոր և բանիմաց ուսուցիչներու կատարեալ սով մը կը տիրէ, մանաւանդ իգական սեռէն։ Ու կը խորհինք, թէ ի՛նչ ըրած են ցարդ կիլիկեան բողոքական աղջկանց հաստատութիւնները, իրենց շռաշռուն անուններու ներքև—Հաջընի ակադեմիան, Այնթապի սեմինարեան, Մարաշի կոլէջը և այլն և այլն։

Դժբաղդաբար Հայուհեացի կիլիկեան գործունէութիւնն ևս—ի բաց առեալ Զէյթունի, ուր օր. Զարուհի Փէշդիմալճեան գործին արժանի անձնաւորութիւն մըն է—միւս ամեն տեղեր բաղձալուած վիճակի մէջ չեն, մանաւանդ Հաճըն։ Սիրելի է յուսալ, որ Հայուհեացը այս երևոյթներուն անտարբեր չի մնար։ Աղջկանց կրթութեան պէտքը շատ մեծ է։

Մի-նա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԷ Ի՛ՆՉՊԷՍ ԴԱՐՁԱՅ ԵՍ ՍՐԲԱԶԱՆ ՕՐՄԱՆԵԱՆԻ ԿՈՂՄՆԱԿԻՑ

Մինչև այս տարվայ յունիս ամիսը, կաթողիկոսական թեկնածուների մասին հարց լինելիս՝ ես հակառակ էի սրբազան Օրմանեանի թեկնածութեանը։ Ես չեմ եղել ոխերիմ հակառակորդ այդ թեկնածութեան, ինչպէս են մամուլի յայտնի օրգաններ և խմբակցութիւններ. բայց ես ունէի իմ առանձին՝ հոգեբանական - էթիկական պատճառներ, որոնց հիման վրա ես յարմար չէի համարում այդ թեկնածութիւնը։ Սակայն սրբազան Օրմանեանի անունը ամեն օր յիշվում էր թէ լրագրութեան և թէ խօսակցութիւնների մէջ, և դէպի այդ անձնաւորութիւնը նկատվում էր ծայրա-

---

ՖԷԼԻԷՏՕՆ

ԿԵՆԴԱՆԻ ՄԵՌԱԾՆԵՐԸ

(Դժոխքի կողքին գրված)

Ասում են՝ հայը առաջադիմող ազգ է. այն բոլորը, ինչ բղխում է եւրոպական քաղաքակրթութիւնից, առաջադիմութիւնից, լուսաւորութիւնից, կուլտուրայից, նա՛ հայը իւրացնում է. լոյսի, բարու, գեղեցկութեան ճառագայթները սփռում են իրանց շողքերը հայ մտքի, սրտի, հոգու վրա...

Ասում են՝ հայը համբերող է. նա երկաթ է, նա անընկճուն, դիմացկուն է. նա կարողացել է ահագին դարեր պահել իր գոյութիւնը։ Նա պահել է իր լեզուն, իր հաւատը. Նրա հայ-քրիստոնեայ լինելը ցայսօր զարմացնում է նոյնիսկ սառը անգլիացուն, նոյնիսկ ֆրանսիացուն, որ նա՛ հայը կարողացել է կուրծքը դէմ տալ քաղաքական հոսանքներին... և... ցայսօր ապրում է։

Այդ բոլորը ասում են, ասում են, ասում են... սակայն, մտնենք հայ ներկայ կեանքի խորքը, նայենք իրականութեանը, տեսնենք նրա կուլտուրացած, լուսաւորված լինելու չափը, սահմանը։

Առաջ մի մտնենք մի հայի խմբագրատուն, հարցնենք պարոն խմբագրին.

— Պարոն խմբագիր, քանի օրինակ է թերթդ տպարանից դուրս գալիս, այսինքն՝ քանի բաժանորդ ունես։

Յետոյ գնանք մի հայ գրավաճառի մօտ, հարցնենք.

— Պարոն գրավաճառ, այս տարի հայ հեղինակների գրուածներից քանի օրինակ ծախած կը լինես։

Յետոյ մտնենք մի թատրօն, երբ հայերէն մի ներկայացում է տրվում, հարցնենք կօրրիդօրի անկիւնում՝ մի բուդկայում գլուխը ծռած՝ նստած տոմսավաճառին, թէ քանի տոմսակ է վաճառված, և յետոյ, այդ բոլոր տեղեկութիւնները միացնենք, կազմենք ստատիստիկական մի գրութիւն կամ աղիւսակ, և կը տեսնենք, որ այդ բոլոր թւերը եթէ գումարենք միմեանց վրա՝ չի ստացվի մի թիւ, որը փողի վերածելիս՝ կարելի լինէր գնել այնչափ սպիտակ կամ վարդագոյն փոշի, որչափ գործադրվում է մի ամսվայ մէջ մի հայաբնակ նահանգական քաղաքում՝ հայ տիկինների դէմքը նուրբ պահելու համար... Մտէք մի հայ ընտանիք, իրան ինտէլիգէնտ-կրթված համարող ընտանիք, լսեցէք հայ օրիորդի կամ տիկնոջ խօսակցութիւնը, խօսակցութեան նիւթը, նայեցէք նրա նիստ ու կացը, մօտիկ ծանօթացէք նրա ներքին աշխարհի հետ, ծանօթացէք նրա լեզուի հետ. հաւատացնում եմ, եթէ խօսում են հայերէն՝ նման է ռուսերէնի, եթէ խօսում են ռուսերէն՝ նման է հայերէնի, եթէ խօսում են վրացերէն՝ նման է թուրքերէնի... իսկ եթէ ուզում էք հասկանալ թէ ինչ լեզուով են նրանք խօսում, հաւատացէք, որ պէտք է կազմել մի նոր բառարան, անգիր սովորել այդ բառարանի մէջ զետեղված բոլոր բառերը, և յետոյ միայն կարելի է ասել, որ այդ ընտանիքը խօսում է այս ինչ լեզուով՝ այսինքն՝ հայերէն - ռուսերէն - վրացերէն-թուրքերէն, վերջապէս մի լեզուով, որ նոր լեզուաբանական գիւտ է, կամ մի նոր էսպերանտօ լեզուով։

Բայց նայեցէք դուրսը, փողոցում, այդ նոյն ընտանիքի անդամներին՝ օրիորդին, տիկնոջը, երիտասարդին, նրա գլխարկը, կօշիկները, նրա կէս-վարտիկ, կէս-իւբկա դէբրան, նրա կոկված ձեռնոցները, նրա ներկած սեւացած յօնքերը, նրա պսպղացող աչքերը, որի ներքևը փայլում է սեւին տուող գոյնով. ապա մի լաւ, ուշիուշով նայեացքներդ յառեցէք նրա շրթունքներին, ինչպէս են այդ շրթունքները փայլում, կարծէք նոր կթված կաթի երեսին ծածանվող թանձրը լինի. ապա, եթէ նա ձեզ արժանի անէ իր շրթունքների մէջտեղից իր փոքրիկ լեզուի ծայրը ցոյց տալու... օ, այն ժամանակ, այն ժամանակ, հաւատացէք, կասէք, որ, իսկապէս, հայը արժանի է վեր դասվելու, արժանի է ընդունակ, առաջադէմ, կուլտուրացող անուանվելու, նա ընդունակ է, առաջադիմող է, կուլտուրացող ազգ կոչվելու համար ունի ամեն իրաւունք, և դասվելու է եւրոպական ազգերի շարքը։

Յետոյ, ուշ գիշերը, երբ կամաց-կամաց երկինքը շառագունվում է, ու թխպոտ երկնակամարը սկսում է փոխել իր դէմքը, և արեգակն սկսում է իր առաջին ժպիտը դարձնել տակաւին նիրհող երկրին՝ տեսէք ինչպէս հայ պատանին, տակաւին 15 թէ 16 տարին չը թևակոխած, գլուխը տմբտմբացնելով ընկերոջը պատմում է, թէ այսօր քանի շիշ գինի է ընկերների հետ խմել, ապա քանի շիշ գարեջուր է դատարկել։

Եւ այդ բոլորը պատմում է ոգևորված, ծխախոտը բերանին. նրա ծխից թէև խեղդվում է, բայց նրա ոգևորութեանը, էքստազին չափ ու սահման չը կայ։ Եւ նա այդ բոլորը պատմում է գիտէք որտեղ...

Կարծում էք, թէ այդ բոլորը նա պատմում է արդէն տուն դառնալիս, տան ճանապարհին...

Ոչ։

Նա այդ բոլորը պատմում է ճանապարհին, նա դեռ գնում է Մաշայի թէ Սաշայի մօտ։

Նա դեռ կը մտնէ Մաշայի թէ Սաշայի առանձնասենեակը, այնտեղ գարեջուր կը խմէ, կը ծխէ, և երբ արեգակի ճաճանչները կը սփռեն մայր երկրի, նոր զարթող երկրի վրա, նա կը գնայ տուն, կընկնէ անկողնու վրա, կը փակէ աչքերը, ապա... սթափվելով կը լուացվէ ու... այս ու այն կողմ փոքր ինչ տատանվելով՝ մէջքին մի քանի ամուր հարուած տալով իր բռունցքներով՝ կը գնայ իր ծառայութեանը, թէ պաշտօնատեղին։

Վերցրէք չափահասին։ Եթէ նա ծառայող է, գործակատար է, կառավարիչ է, ինչ որ է... Կարծում էք նա մի այլ կեանքով է ապրում... Ոչ։ Նա ույժ է տալիս թղթախաղութեանը, գինուն, ծխախոտին, իսկ եթէ մնում է ազատ ժամանակ այդպիսի գործունէութիւնից յետոյ, նա իր օրվայ վերջին ժամերը յանձնում է այն կանանց փափկայանքներին, որոնց՝ եթէ օր-ցերեկով ճանապարհին, փողոցում հանդիպէ իւրայինների հետ՝ չի բարևի... Ահա, եթէ շարունակենք այսպէս պատմելու բոլորը... ափսոս են լրագրի տողերը, էջերը։

Երբ այս յօդուածը գրել վերջացրել էի, կարդացի մի անգամ, յետոյ նորից կարդացի, երրորդ անգամ, և ընկայ մտածմունքի մէջ։

Գուցէ, ասացի, բոլէզնական ցնցումն է ինձ տեղիք տուել այսպիսի աչքով նայելու հայի ներկային. գուցէ մաղձս ուզում եմ գիտակցաբար թէ անգիտակցաբար թափել հայ եղբօրս, հայ քրոջս վրա, նրա գլխին...

Բայց, Տէր-Աստուած, ճիշդն եմ ասում, այս դառն ճշմարտութիւնն է, այս տխուր, մռայլ իրականութիւնն է, որ գրկել է ներկայումս հային։ Ասացէք, մի՞թէ ճիշդ չէ, որ այժմ հային գրկել է լոկ մօդան, բամյեղ ներհակ վերաբերմունք. մի կողմը մինչև երկինք էր բարձրացնում նրան, միւսը մինչև դժոխք իջեցնում. մի կողմի համար նա իդէալական բարձր, կաթողիկոսութեան համար բոլոր ցանկալի բարեմասնութիւններով օժտված անձն էր. միւս կողմի համար նա արատավորված անձն էր, որի անունը լսել անգամ չէ կարելի, ուր մնաց թէ կաթողիկոս ընտրել։

Արդեօք ստում էր կողմերից մէկը, արդեօք մոլորված էր. և ո՞ր կողմը աւելի մօտ էր իրականութեան։

Ես, այդ բուռն պայքարի մէջ բոլորովին չէզոք, սրբազան Օրմանեանի հետ ոչ մի անձնական յարաբերութիւն չունեցած անհատ, այդ ներհակ, իրար միանգամայն ոչնչացնող գրվածքները կարդալով՝ կարիք զգացի մօտից ծանօթանալ հարցի հետ, վերաքննել այն հոգեբանական-էթիկական պատճառները, որոնք ինձ տրամադրում էին սրբազան Օրմանեանի դէմ, ծանօթանալ նրա անձնաւորութեան հետ՝ վստահելի աղբիւրներից։

Իմ պարապմունքների, իմ ունեցած ընդդէմ-Օրմանեան պատճառների վերաքննութեան հետևանքն այն եղաւ, որ ես հասայ մի անյողդողդ համոզմունքի. այն է, թէ ներկայումս մեր ամբողջ հոգևորականութեան մէջ—որքան հրապարակի վրա յիշվում են անուններ—չը կայ մի ուրիշ անձ այնքան պատրաստված, այնքան յարմար կաթողիկոսական գահի համար և այնքան օգտակար այդ գահում՝ որքան սրբազան Օրմանեանը։

Մի շարք յօդվածներում ես կը նկարագրեմ, թէ ի՛նչպէս լուծեցի իմ ընդդէմ-Օրմանեան պատճառներս, ի՛նչպէս ինձ համար բացատրեցի այն մեղադրանքները, որ բարդվում էին սրբազան Օրմանեանի վրա, ի՛նչ հանգամանքներ նպաստեցին իմ դարձին։

Այստեղ հարկ եմ համարում շատ համառօտ յիշել, որ այս դարձում թէև ոչ միակ, բայց մեծ դեր կատարեց սրբազան Օրմանեանի հոյակապ աշխատութիւնը «Հայոց եկեղեցին և իր պատմութիւնը», որ այս ամառ կարդացի։ Այս գիրքը, ինչպէս յայտնի է, հեղինակը նախ գրել է ֆրանսերէն և ապա թարգմանել է հայերէն։ Սա, ի հարկէ, լոկ մի դիպված է. բայց իմ հասկացողութեամբ՝ կարծես թէ յիրավի այսպէս էլ պէտք է լինէր, որովհետև նա իրօք եվրոպական գիրք է, որ թարգմանվել է հայերէն. հայ իրականութիւնը և գրականութիւնը սովորաբար այսպիսի երկեր չեն արտադրում։ Նրա մասին ես կանգ կառնեմ իմ առաջիկայ յօդվածներում. առայժմ կը բավականանամ ասելով, որ գիրքը կարդալիս՝ ես ի մէջի այլոց որոնում էի հեղինակի ոգին, ուզում էի նրան ճանաչել։ Ինձ հետաքրքրում էին այս հարցերը.—հեղինակը, լինելով հմուտ աստվածաբան և թունդ եկեղեցական, համբերատար ոգի ունի թէ անհամբերող, ժողովրդական ուղղութիւն ունի թէ միանձնական։

Այս երկու հարցերին ես լիուլի պատասխան գտայ յիշված գրքի մէջ։ Կրօնադավանական հարցերում ես ճանաչեցի Օրմանեան սրբազանին աւելի ազատամիտ, եկեղեցական-վարչական հարցերում տեսայ նրան աւելի ժողովրդական՝ քան կարող էի սպասել։ Հեղինակի համբերողութեան նկատմամբ շատ ուշագրավ է «Դաւանական սկզբունքներ» գլուխը, որտեղ հեղինակը խստիվ տարբերութիւն է դնում «Դավանութեան» և «Վարդապետութեան» մէջ, և հակառակելով հանդերձ ծայրայեղ ազատամտութեան, ռացիօնալիզմին, կրօնական հարցերում՝ այնու ամենայնիվ ասում է, թէ «դաւանութիւնը եկեղեցւոյ հեղինակութեամբ զօրացած ճշմարտութիւն է, վարդապետութիւնը՝ դպրոցներու հեղինակութեամբ հաստատուած կէտն է». «վարդապետութիւնը երբեք բացարձակ կերպով հաւատացուելու հարկ չի պարունակեր, և չընդունուած ատէն եկեղեցւոյ ծոցէն մերժուած ըլլալու հետևանքը չարտադրեր» (126)։ «Հայոց եկեղեցւոյն մէջ... ազատութիւն յերկրպայականս՝ իմաստին ամենէն ընդարձակ առումով գործածուած է» (138)։ «Հայ եկեղեցին... սիրեց հաստատուն մնալ աստուածաբանական լայնախոհութեան և եկեղեցական ազատամտութեան սկզբունքներուն վրայ, զոր անխախտ և անփոփոխ պահեց և պիտի պահէ ասկէ ետքն ալ» (142)։ Այս հայեացքները, որ ունի հեղինակը և որը գտնում է հայոց եկեղեցու մէջ, ցոյց են տալիս այնպիսի համբերողութիւն կրօնական հարցերում, որպիսին միայն հնարավոր է մի եկեղեցականի մէջ։ Եվ այս ոգին տիրում է ամբողջ գրքում։

Հեղինակի ժողովրդական ուղղութիւնը շատ փայլուն կերպով երևում է «Աշխարհականներու մասնակցութիւնը» գլխում, որի մէջ աւելի լրիվ, քան ուր և իցէ բերված են հայ ժողովրդի մասնակցութեան կէտերը եկեղեցու վարչական, մատակարարական, նոյնիսկ վարդապետական հարցերում։ Հայ ժողովուրդը պէտք է կարդայ այդ գլուխը, որպէսզի ծանօթանայ, թէ ինչ իրաւունքներ վայելել է հնուց ի վեր կամ վայելում է այժմ՝ իր ազգային եկեղեցու գործերի տնօրինութեան մէջ. պէտք է կարդայ, որպէսզի հպարտութիւն զգայ, որ պատկանում է այդ ազգային-ժողովրդական եկեղեցուն։ Ես կը բերեմ այդ գլխի սկզբի և վերջի տողերը։ «Հայեր իրենց կղերը իբրև եկեղեցւոյ բացարձակ տէրն և տիրողը չեն նկատեր։ Եկեղեցին իբրև հաւատութիւն առնուած ատեն, նոյնչափ եկեղեցւոյ հաւատացեալներուն կը պատկանի, որչափ եկեղեցւոյ պաշտօնեաներուն։ Այդ սկզբունքին զօրութեամբ, հաւատոյ պահանջներէն դուրս, որոնց համար ձեռնադրութիւն և աստիճան անհրաժեշտ է, եկեղեցւոյ վարչութեան և մատակարարութեան վերաբերեալ գործերը աշխարհական տարրին մասնակցութեամբ, կամ գործակցութեամբ կը կառավարուին» (181)։ «Այդ ամեն ծանօթութիւնները տալէն ետքը իրաւունք կունենանք եզրակացնել, որ բոլոր քրիստոնեայ եկեղեցիներու մէջէն, հայ եկեղեցին է, որուն մէջ ժողովրդական հոգին աւելի ընդարձակութեամբ կը փայլի։ Նա բոլորովին օտար է եկեղեցւոյ մէջ կղերական կամ քահանայական բացառիկ տիրապետութիւն հաստատելու դրութենէն... Հայաստանեայց ուղղափառ եկեղեցին ժողովրդական կամ աշխարհական տարրին իրեն հետ գործակցութիւն ապահովելով՝ առջևն առաւ այն երկու մեծ վնասներուն, որոնք եկեղեցւոյ կացութիւնը կը վտանգեն Արևմուտքի մէջ. առոնցմէ մէկն է կղերականութիւնը ազգային գործոց մէջ, և միւսը՝ անտարբերականութիւնը կրօնական գործոց հանդէպ» (155—6)։

Կարելի էր այս քաղվածքների վրա աւելացնել և ուրիշ քաղվածքներ, որոնց մէջ արտայայտված են հեղինակի անյողդողդ սկզբունքները հայ ժողովրդի պահանջների նկատմամբ՝ վերաբերեալ նրա կեանքի, գոյքի, պատվի, ազգային ինքնութեան, լեզվի, գրականութեան, ազգային եկեղեցու կանօնների, ավանդութիւնների և նրա ստացած իրավունքների անվթար պահպանութեան (247—8)։

«Հայոց եկեղեցի» գրքից ես դուրս բերի այս համոզումը, որ հեղինակը, լինելով հմուտ մեր եկեղեցու պատմութեան, լինելով ճշմարիտ եկեղեցական՝ միևնոյն ժամանակ համոզված է, որ մեր եկեղեցին իր համբերողութեամբ և ժողովրդականութեամբ առաջինն է բոլոր եկեղեցիների մէջ։ Եվ մեր եկեղեցու այս յատկութիւնները նա համարում է նրա գոյութեան ամուր հիմքն ու պարծանքը։

Արդէն հասած լինելով որոշ եզրակացութեան այն առարկութիւնների մասին, որ ես ինքս անում էի կամ ուրիշների կողմից լինում էին սրբազան Օրմանեանի կաթողիկոսական թեկնածութեան դէմ, ապա կարդալով «Հայոց եկեղեցի» գիրքը և ծանօթանալով հեղինակի սկզբունքների հետ-քաղաքական ծրագրի, ինչպէս և զուտ կրօնական և եկեղեցական վարչական գործերի նկատմամբ՝ ես եկայ այն համոզման, որ յիշեալ յատկութիւններն ունեցող անձնաւորութիւնը ամենայարմար անձն է հայոց հայրապետական գահը բազմելու համար՝ մեր կեանքի ներկայ պայմաններում։

Ստ. Մալխասեանց

ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Ուրբաթ, նոյեմբերի 4-ին, տեղի ունեցաւ Թիֆլիս Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ներկայ էին 38 հոգի։

Նախագահ Ա. Քալանթար ծանօթացրեց ժողովականներին Ընկերութեան գործերի հետ և յայտնեց, որ առաջիկայ ընդհանուր ժողովներում պէտք է քննվեն տնտեսական մի քանի խնդիրներ։

Այնուհետև նա զեկուցեց համառօտ կերպով իր կատարած ճանապարհորդութեան մասին դէպի Սև-ծովի արևելեան ափերը։ Նա նկարագրեց երկրի անցեալը, երբ այնտեղ ապրում էին նրա հին բնակիչները՝ չերքեզները, և այն փոփոխութիւնները, որոնք առաջ եկան չերքեզների Թիւրքիա գաղթելուց յետոյ։ Չերքեզների այգիների պտուղները մինչև այժմ դեռ մնացել են նախկին բնակութեան տեղերում և տալիս են մի որոշ եկամուտ ներկայ ազգաբնակութեան։ Զեկուցանողը կանգ առաւ աւելի մանրամասնօրէն ծխախոտագործութեան վրա և յայտնեց, որ Սև-ծովի արևելեան ափերում արդիւնաբերվում է բարձր յատկութեան ծխախոտ, գլխաւորապէս «Տրապիզոն» և «Սամսօն» կոչված տեսակներից։ Այդ արդիւնաբերութեան մէջ հայերը մեծ տեղ են գրաւում և յայտնի են իբրև բարեխիղճ աշխատողներ երկրի մէջ։ Զեկուցանողը նկարագրեց կուլտուրական ուրիշ բոյսերի մշակութիւնը ծովեզրեայ շրջանում և կանգ առաւ մի քանիսի վրա, որոնք ունեն գործնական նշանակութիւն, ինչպէս օրինակ նարինջներ, մանդարինների մշակութիւնը, գինեգործութիւնը, որ տալիս է Նովօրօսիյսկի շրջանի այգեգործներին 300—1000 րուբլի եկամուտ մի դեսետինից և այլն։ Ի վերջոյ զեկուցանողը տուեց տեղեկութիւն ծովեզրի կենդանապահութեան աջող և անաջող փորձերի մասին, ցոյց տալով մալարիայի կործանիչ ազդեցութիւնը անասնապահութեան վրա։

Գ. Գրձելեան զեկուցեց իր կատարած ճանապարհորդութեան մասին դէպի Ղարաքիլիսա, Ալեքսանդրօպօլ և Շուլավէր։ Ղարաքիլիսայում նա կայացրել է խորհրդակցութիւն տեղական ուսուցիչների և մասնաւոր անհատների հետ՝ որոշելու հողաբաժիններ փորձերի համար առաջիկայ 1912 թւականին։ Այդպիսի հողաբաժիններ աչքի առաջ կան արդէն երեքը, որտեղ կը բուսցվեն բանջարանոցային և դաշտային բոյսեր։ Ալեքսանդրօպօլում նա մասնակցել է քաղաքային վարչութեան մէջ գոյութիւն ունեցող գիւղատնտեսական յանձնաժողովի նիստին և յայտնել իր կարծիքները քաղաքային հողերի շահագործութեան մասին։ Շուլավէրում նա գտել է տեղական այգիները վնասված անցեալ տարվայ ցրտերից։ Շուլավէրցիները պատրաստակամութիւն են յայտնել տալ ունկնդիրների որոշ թիւ, եթէ ինստրուկտօր գնայ այնտեղ զրոյցներ կազմակերպելու։

Խ. Երիցեան զեկուցեց իր կատարած հրահանգչական գործունէութեան մասին Սաղիանի շրջանում։ Այդ գործունէութիւնը արտայայտվել է մի քանի ձևերով։ Ինստրուկտօրը կազմակերպել է երեք շարք զրոյցներ՝ մէկը ընդհանրապէս այգեգործութեան մասին, երկրորդը յատկապէս գինեգործութեան մասին, երրորդը՝ բնագիտութեան մասին դպրոցի աշակերտների համար, որոնց հետ կատարվել են զբօսանքներ այգիներում և դաշտերում։ Կարդացվել են մի երկու ընդհանուր զրոյց էլ գիւղական ամբողջ հասարակութեան համար։ Գործնականապէս Երիցեանը խնամել և բժշկել է գիւղացիների մի երկու այգիներ, մշակել է նոր ձևով մի հողաբաժին և տնկել է այնտեղ վազեր, որոնք աճել են անհամեմատ աւելի մեծ աջողութեամբ, քան գիւղացիների մօտ։ Բացի այդ՝ հող է պատրաստել փորձերի համար առաջիկայ 1912 թւին։ Զեկուցանողը յայտնեց, որ նրան դիմել են Մաղրասա գիւղի այգեգործները, թւով աւելի քան 40 հոգի, կազմելու նրանց համար ևս զրոյցներ այգեգործութիւնից և գինեգործութիւնից, բայց նա անկարող է եղել յարգելու մաղրասացիների խնդիրքը իր զբաղմունքների պատճառով Սաղիանում. ուստի առաջարկում է Հայ Գիւղատնտեսական և Տնայն. Ընկերութեանը՝ ուղարկելու այնտեղ մի ուրիշ մասնագէտի, որ բաւարարութիւն տար եղած պահանջին։ Զեկուցանողը առաջարկում էր նոյնպէս ունենալ Սաղիանում գործիքների մի պահեստ գիւղացիներին վաճառելու նրանց՝ առանց ուրիշ միջնորդների։

Ժողովը հետաքրքրվեց յարուցված հարցերով և վիճաբանութիւնից յետոյ որոշեց յանձնել վարչութեանը, պարզելու թէ ի՛նչ ձևով նա կարող է կատար ածել այդ ցանկութիւնները։

Նիստին ներկայացված էին Ընկերութեան վարպետուհի Աննա Մարգարեանի պատրաստած ջեջիմները. նախագահը զեկուցեց, որ վերջին ժամանակները յայտնվում են պատուէրներ՝ պատրաստելու այդ ջեջիմներից մի քանի հարիւր արշիններ։ Վարչութիւնը որոշել է մի որոշ չափով օգնել իր վարպետուհիներին՝ հայթայթելու նրանց մթերք՝ գործուածքներ պատրաստելու համար, և ներկայ ջեջիմները այդ օգնութեան արդիւնքն են կազմում։

ԲԱՆԱՍՏԵՂԾ Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ 30-ԱՄԵԱՑ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Հայ մտաւորականութիւնը, առաջադէմ տարրերը լեթարգիական քնից արթնացման նշաններ են ցոյց տալիս։ Նրանք ձգտում են գնահատել ժողովրդի այն անխոնջ զաւակներին, որոնք տասնեակ տարիների ընթացքում թափել են անխնայ իրանց ամբողջ էներգիան ամենանուիրական զգացմունքներով յօգուտ մի աղքատիկ գրականութեան, մոռացել են ընտանեկան ծով վշտերը, նուիրվել են մի հասարակութեան, որի գրկում սնվել, մեծացել ու շնչել են նրանք։

Վերջին տարիների ընթացքում իրար ետևից հրապարակի վրա դրվեցին մի շարք յոբելեաններ՝ հանրածանօթ դէմքերից սկսած մինչև գաւառական համեստ գործիչների, և ահա ամեն կողմերից մեծ շռինդներով մէջտեղ բերվեցին նորանոր մարդիկ, որոնց կատարած մեծ աշխատանքը հասարակութեան օգտակարութեան տեսակէտից վիճելի է դեռ։ Սրանով մենք չենք ուզում վիրաւորել այն երախտագիտական զգացմունքները, որ ցոյց են տալիս մի խումբ մարդիկ, կամ մի հասարակութիւն դէպի իր սիրած և գործունեայ անդամը։ Մենք ուզում ենք շեշտել այն ծայրայեղութիւնը, որի մէջ սիրում են ընկնել շատերը համեստ գործիչների նկատմամբ, և միւս կողմից ընդգծել թոյլ վերաբերմունքը տաղանդաւոր, աչքի ընկնող գրական ույժերի ու հասարակական գործիչների հանդէպ։

Այսօր, սակայն, սրտի մի անհուն բերկրութեամբ պիտի արտասանենք, որ հրապարակի վրա է դրվում մեր ամենասիրելի, տաղանդաւոր բանաստեղծներից մէկի՝ Յ. Յովհաննիսեանի 30-ամեայ յոբելեանը։

Ո՞վ չէ ճանաչում մեծ բանաստեղծին, որի երգերն ու տաղերը հնչել են բոլորի շուրթերից և յուզել նրանց հոգեկան աշխարհը վերամբարձ թռիչքով։

Ո՞րպիսի անսպառ հաճոյքով են կարդացվել այն մարգարտաշար տողերը, որոնց ամեն մի խօսքը թափանցել է մինչև մեր հոգու խորքը և ցնցել մեզ ուժգին։

Ո՞վ չէ լսել նրա բանաստեղծութիւնների մէջ այն հուժկու, անհեղագոչ ձայնը, որ խարազանում է մարդկային հոգու կեղտոտ կողմերը, հանդէս է գալիս ազնուացնելու, փափկացնելու գազանային բիրտ բարքերը։

Ո՞վ չէ յիշում այն մեղմ, քնքուշիկ զրոյցը, այն թախծոտ տողերը, զուլալ վշտերը, որոնք կապում, կաշկանդում են մեզ բանաստեղծի հետ անքակտելի սիրով։

Ո՜հ, մեծ են, անթիւ, անգնահատելի՝ բանաստեղծի արած ծառայութիւնները. քանի՜-քանի՜ սիրահարներ սնվել են նրա երկնառաք նիւթով։

Մենք համարձակութիւն չենք ստանում մի քանի խօսքով բնորոշել սիրելի բանաստեղծին, որը մէկն է մեր գրականութեան փայլուն աստղերից։

Յ. Յովհաննիսեանը բանաստեղծ լինելուց զատ մէկն է այն շատ քչերից, որոնք իրանց անհատական կեանքով օրինակելի կարող են լինել բոլորիս համար։ Ո՞ւմ կարող էր արդեօք վշտացնել այդ բարի, մաքուր և ազնիւ հոգին, որ լի է կարեկցութեամբ ու գութով։ Անհատական գծում շատերից հեռու, առաքինութիւնն ընտրած ապաւէն, նա շարունակում է իր կղզիացած ամենահամեստ կեանքը գոյութեան կռւի մաքառումներով, չը խնայելով միաժամանակ իր պատրաստակամութիւնը այն բոլոր դէպքերում, երբ նրա ծառայութիւնը հանդիսացել է մի բարի և արդիւնաւէտ գործ։

Յ. Յովհաննիսեանը կատարեալ մարդ լինելուց զատ եղել է նաև ուսուցանող մանուկ սերնդի հենց գիտութեան տաճարում, ուր նա երկար ու ձգող տարիներ գրկաբաց սիրել ու սիրվել է իր աշակերտներից։ Ո՞վ էր այն աշակերտը, որ պիտի վշտանար կծուոտ հօրից, որը ամենահամբերատար ու քնքուշ սիրով էր նայում պատանեկական անմեղ չարութիւնների վրա։ Բաւական էր, որ բարձրանար ամբիօնի վրա հռչակաւոր բանաստեղծը և ահա հարիւրաւոր անմեղ բերաններից թռչէին հրճուանքի ամենազեղուն բացագանչութիւններ, հսկայ տաճարը դղրդար՝ անվերջ ու որոտընդոստ ծափահարութիւններից տակ և պատանիների դէմքերին փայլէր ամենավառ ուրախութեան պայծառ ժպիտներ։

Ահա այսպիսի մի շնորհալի, ամբիծ ու աննկարագրելի մարդու բանաստեղծական կեանքի 30-ամեայ յոբելեանն է, որ համայն հասարակութեանն առաջարկվում է տօնել։

Մենք մազաչափ անգամ չենք կասկածում, որ մամուլը իր կարող ձայնով հրապարակ կիջնի զարկ տալու և շուքով տօնելու այս նշանաւոր յոբելեանը։

Մենք նաև հաւատում ենք յուսալ, որ բանաստեղծ Յ. Յովհաննիսեանի աշակերտները, յարգողներն ու բարեկամները կը շտապեն արձագանք տալ խմբերով։ Նրան մօտիկ գտնված անձնաւորութիւններն ու ընկերները, մանկավարժական խորհուրդը Գէորգեան ճեմարանի, ուր ծառայել է նա երկար տարիներ որպէս դասատու, կը փութան կազմակերպել յոբելեանի տօնումը՝ վաղօրօք յայտարարելով ամենուրեք, որպէսզի հասարակութիւններն էլ հնարաւորութիւն ունենան կատարելու իրանց գեղեցիկ պարտականութիւնները։

Գահ

ԴՊՐՈՑԱԿԱՆ-ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՖՈՆԴԸ

Կ. Հ. Բարեգ. Ընկ. խորհուրդը ստացել է Գէորգ արքեպ. Սուրէնեանից 50 ր., տիկ. Դարիա Յովհաննիսեանից 5 ր.։ Նախկինի հետ միասին խորհուրդը ստացել է 1792 ր. 30 կ.։

ԿԱԹ. ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Մոսկվա, 30 հոկտեմբերի

Ինչպէս յայտնի է, հոկտ. 30-ին, առաջնորդի հրամանագրութեան համաձայն, պէտք է կատարվէր պատուիրակի անձնափոխանորդի ընտրութիւն։

Այս անգամ ժողովը աւելի էր բազմամարդ. միայն ձայնի իրաւունք ունեցողների թիւը 133 էր։ Ձայների ահագին մեծամասնութեամբ նախագահ ու քարտուղար ընտրվեցին կրկին Մամիկոնեանը և Բարխուդարեանը։

Ստացվել էին Էջմիածնի սինօդից երկու պաշտօնական հեռագիր, մէկը ամսիս 10-ից, միւսը՝ 28-ից, միևնոյն անգամի տարագրութեամբ, սակայն մէկը միւսին հերքող։

Ու մինչդեռ ժողովը դժուարանում էր գտնել որևէ ելք՝ որոշ եզրակացութեան գալու, ստացվեց առաջնորդից մի հեռագիր, որով հրամայվում է՝ բեկել սեպտ. 11-ի ընտրութիւնը, որտեղ պատուիրակ էր ընտրվել բժ. Ս. Շահ-Նազարեանը, ու կատարել նոր ընտրութիւն։ Ե. Ք. Ն.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Յիշեցնում ենք կաթողիկոսական ընտրութեան Թիֆլիսի թեմի պատուիրակներին, որ այսօր Թիֆլիսի առաջնորդարանում, ցերեկվայ ժամը 12-ին, նշանակված է պատուիրակների ժողով՝ ընտրելու թեմական պատգամաւոր և անձնափոխանորդ։

◆ Կովկասեան համալսարանի համար դրամ հանգանակող կոմիտէտի նախագահի հաշւից երևում է, որ միանուագ նուիրատւութիւնների գումարը ցայսօր 1,733,226 րուբլի 07 կոպէկ է։ Բացի դրանից կայ մի ընդարձակ հողաբաժին ապագայ համալսարանի համար։ Ամեն տարի ստացվելու է նպաստ միևնոյն համալսարանի պէտքերի համար ընդամենը 57100 րուբլի։ Նոր նպաստները կարելի է ուղղել կոմիտէտի նախագահ իշխ. Գ. Թումանեանին։

◆ «Մշակի» ներկայ համարի մէջ՝ տեխնիկական անյարմարութիւններից ստիպված՝ անկարելի եղաւ զետեղել մի քանի հերթական յօդուածներ։

◆ Թիֆլիսի նահանգապետը յայտարարում է. «Ես տեղեկութիւններ ստացայ, որ մի քանի թաղական վերահսկիչներ ներկայանում են ընտրողներին և հարցնում են նրանց, թէ ո՛ւմ են արդեօք մտադիր ձայնաւոր ընտրել առաջիկայ ընտրութիւններին։ Այդ անկանօնութիւնները պարզելու համար ես յանձնարարեցի Թիֆլիսի ոստիկանապետին քննութիւն կատարել, իսկ գործողութիւնները անմիջապէս դադարեցնել։ Քննութիւնը պարզեց, որ 2-րդ քաղաքամասի պրիստաւ Միկաբերիձէն, 3-րդ քաղաքամասի պրիստաւ Դուշինսկին և 4-րդ քաղաքամասի պրիստաւ Դաշկովը թաղական վերահսկիչների յիշեալ գործողութիւնները թոյլ են տուել, իրանց պարտականութիւնները այս դէպքում սխալ կերպով հասկանալու պատճառով։ Այդ տեսակ զանցառութեան համար յայտարարում եմ պրիստաւներ Միկաբերիձէին, Դուշինսկին և Դաշկովին նկատողութիւն»։

◆ Վերջերս Թիֆլիսում նկատվում են քութէշի յաճախակի դէպքեր։

◆ Թիֆլիսի քաղաքային առաջին ապաստարանում անցեալ հոկտեմբեր ամսում գիշերել են 181 տղամարդ 2773 անգամ։ Ըստ ազգութեան նրանք բաժանվում են հետևեալ կերպով. ռուսներ՝ 64 տղամարդ, հայեր՝ 56 տղ., վրացիներ՝ 44 տղ., լեհեր՝ 5 տղ., գերմանացիներ՝ 5 տղ., ասորի՝ 1 տղ., հրէայ՝ 1 տղ., օսեր՝ 3 տղ. և լատիշ՝ 1 տղամարդ։

◆ Վաղը, երկուշաբթի օր, Հայոց Դրամատիքական Ընկ. խումբը ներկայացնելու է Սումբատովի «Դաւաճանութիւն» դրաման։ Մասնակցում է ամբողջ խումբը։

◆ Հոկտեմբեր ամսվայ ընթացքում Կովկասի Հայոց Բարեգ. Ընկերութեան ճաշարանից տրված է աշակերտ-աշակերտուհիներին 7722 ճաշ, Ընկերութեան որբանոցին 1023, ընդամենը 8745 ճաշ։

◆ «Լոյս» ընկերութեան վարչութիւնը շնորհակալութեամբ ստացել է յօգուտ իր դպրոցի չքաւոր աշակերտ-աշակերտուհիների և նորաբաց գիւղական մանկական գրադարանի հետևեալ նուէրները. Աֆրիկեաններից 2 թոփ չիթ, Եղ. Բաղդասարեանցներից 1 թոփ չիթ, Ալաթեաններից 40 արշին չիթ առևտրական տուն Ակոփսեաններից 6 գոգնոցի կտորներ, Կոստանդին Մեհրաբեանից 25 ր. և Ս. Քամալեանից յանուն բժ. Յ. Ազատեանի իր հեղինակութիւններից 21 կտոր գիրք։

◆ Այսօր Ժողովրդական Տանը բժ. Ֆլերովը կը դասախօսէ «Մարդու արիւնը և արեան շրջանառութիւնը»։ Սկիզբն է ժ. $10^1/_2$-ին։ Յետոյ կը լինի ձրի համերգ։

◆ Կովկասեան զինւորական-նահանգական դատարանը հնգօրեայ դատավարութիւնից յետոյ փոխ-գնդապետ Դոբրովոլսկին սպանելու դրդման համար 15 զինւորներից երկուսին դատապարտեց մահվան պատժի, ութ հոգու՝ տաժանակիր աշխատանքների ցման, հինգին արդարացրեց։ Յիշեալ փոխգնդապետին սպանող կօզակ Դիմէշկօն արդէն կախվել էր առաջ։ («Р. Сл.»)

◆ Վաղը Ժողովրդական Տանը ռուս թատերասէրների խումբը կը խաղայ Լ. Տոլստոյի «Կենդանի դիակ» պիէսը։

բասանքը, կինին, մետաղը, որ նրա համար չը կայ լոյս, չը կայ հոգեկան բաւականութիւն, մտաւոր սնունդ, պաշար... և ինչ է պատճառը. որովհետև նրա համար աւելորդ է հոգեկան, մտաւոր սնունդը, պաշարը. որովհետև նրա մէջ չը կայ գիտակցութիւն, նրա մէջ թմրած, մեռած են այն զգացմունքները, այն յույզերն ու տենչերը, որոնք մարդու միտքը սլացնում են դէպի կապոյտ, պարզ ու պայծառ երկնակամարը, դէպի վճիտ ու յստակ եթերը, դէպի վեհն և գեղեցիկը, դէպի ազնիւն ու բարձրը, բարին։ Ասացէք. համարեցէք ձեր ձեռքերի մատների վրա այն անունները, որոնք այսօր հայ երկնակամարի բարձունքներում ճախրում են ազատ արծուի պէս... Ասացէք այն անձանց մասին, որոնց անուններով այսօր երդվում է հայ ազգը, որոնց անցած ճանապարհին ծաղիկներ ու վարդեր են ցանվում, որոնցով մենք պարծենում ենք։ Ասացէք մեր կոմպօզիտօրների, նկարիչների, քանդակագործների, արտիստների, երգիչների, բանաստեղծների, վիպասանների, գրողների անունները, տուէք այդ անունները։ Մի՞թէ հայը ստոր է, անընդունակ է հրէայից։ Բայց տեսէք հրէայ կոմպօզիտօրներին, քանդակագործներին, նկարիչներին... և ինչն է նրանց ույժ, եռանդ, կեանք տուել. այդ ո՛ր Աստուածն է նրանց մէջ ներշնչել իր գերմարդկային ույժը, սէրը, ոգևորութիւնը, էքստազը, տենչն ու յույզերը։ Այդ տուողը՝ ճնշված, արհամարհված, ատված հրէայի շրջանն է, հրէայի կեանքն է, հրէական օդը, մթնոլորտը։

Մենք։

Եթէ Թիֆլիսից գնանք Պետերբուրգ, այնտեղից էլ մի քիչ նեղութիւն կրենք մի ժամ երկաթուղով անցնենք Պավլօվսկ կոչված քաղաքի կայարանը, կը տեսնենք, որ այնտեղ նուագածուների մի խումբ նուագում է. կայարանը լցված է հասարակութեամբ, և լուրջ հասարակութեամբ։

Օրկեստրի ղեկավարն է մի երիտասարդ, հասարակութեան ամբողջ ուշադրութիւնը՝ լուրջ ուշադրութիւնը լարված է նրա՝ այդ ղեկավարի վրա... Նրա ձեռքի իւրաքանչիւր շարժումը, նրա իւրաքանչիւր մի հայեացքը կլանվում է... Ինչու... Որովհետև նա ամբողջովին տրված է յույզերին, հոգեկան փոթորիկներին. նա ըմբռնում է երգի, հոգեկան վերըմբռնումների գերիշխանութիւնը... Եւ այդ ըմբռնելու համար հարկաւոր է մտքի ույժ, մտքի, զգացմունքի ամբողջութիւն... Տաղանդ։ Լուրջ ընդունակութիւն։ Եւ նա՝ հայ է։ Բայց ո՞րտեղ է... քանի՜ քանի՜ սար ու ձոր, լեռ ու դաշտ, դաշտ ու անտառ, հեռու հայ կենտրոնից, հայ կեանքից։

Նրա խումբը նուագում է, ոգևորում է ունկնդիրներին, նուագում է կտորներ, արիաներ, և ունկնդրող հասարակութիւնը ոգևորվում է, վերածնվում է։ Թերթեցէք այդ օրվայ ծրագիրը. այդ կտորները, արիաները վերցված են տաղանդաւոր կոմպօզիտօրի աշխատութիւններից, հանգուցեալ ռուս մեծ կոմպօզիտօր Րիմսկի-Կորսակովի աշակերտից, Սպենդիարօվից, և նա՝ Սպենդիարօվը հայ է։ Եւ նա այսօր ռուս երաժշտական աշխարհում՝ իբրև լուրջ կոմպօզիտոր՝ լուրջ տեղ է բռնում։ Բայց ո՞րտեղ է նա... Նա լուրջ հասարակութեան համար է, նա եւրոպացու համար է։ Նա հայի համար չէ, նա փախել է հայից։

Եւ հաւատացած եմ, որ 99% բոլոր այն հայ տիկիններից, օրիորդներից, երիտասարդներից, որոնք տօն օրերին, կիրակի օրերը զարդարված, պճնված անցնում են Գօլօվինսկի պրօսպէկտով, Միխայլեան, Դվօրցօվայա փողոցներով, որոնց արտաքինն եթէ մի եւրոպացի՛ նայէ, կասէ. թէ իսկապէս այս ազգը ֆրանսիացուց անգամ յետ չէ մնացել, բայց, ասում եմ, 99% ծանօթ չէ եւրոպացու մտաւոր հօրիզոնի հետ։ Նա աղքատ է մտաւորապէս, նրա ներքին աշխարհը չէ ամփոփվում, չէ յուզվում։ Նա թմրած է։ Նա ննջում է։ Հայի գիտակցութիւնը մեռած է այժմ։ 60-ական թւականներին զողդողդ ձայները լռեցին, հանգաւ Ստեփաննոս Նազարեանի, Նալբանդեանի, Արծրունու, Շահազիզի վառած ճրագը, իսկ նորից վառելու ընդունակները՝ ապարէզ չը գտնելով հայի ներկայ տխուր մթնոլորտում հեռու են փախչում։

Ալեքսանդր Բեհեանց

Դժուքի ամառանոցում 1911 թ.

◆ «3. P.»-ը գրում է, որ Վերին Աջարիայից Բաթում է գնացել մի պատգամաւորութիւն՝ բողոքելու միւխօնէր աբեղայ Գավրիլի գործողութիւնների դէմ, որ նրանց ասելով անարգում է մահմեդական կրօնը։ Բողոքողները յայտնում են, որ՝ այդ տեսակ վերաբերմունքը կարող է ստիպել նրանց գաղթել Թիւրքիա։

◆ Բաթումի կայարանում ձերբակալել են Դերբէնտի բէալական դպրոցի Թուրք սան Վէլի-բէկին, որ կամենալիս է եղել մեկնել Տրիպօլիս՝ Թիւրքերին օգնելու համար։

◆ Ռոստովի քաղաքապետութեան կից գործող քաղաքային ատեանը բեկել է Նոր-Նախիջևանի դումայի որոշումը, որի համաձայն հայոց Թեմական դպրոցում և հայկական օրիորդաց ուսումնարանում հաստատվելու էին երկու Թոշակաւորի տեղ «Пр. Край» Թերթի հիմնադիր ձայնաւոր Յարութիւնեանի յիշատակը յաւերժացնելու համար։

◆ Երևանի Թեմի կողմից կաթողիկոսական պատգամաւոր ընտրված Տէր-Խաչատրեանը ստացել է 42 սպ. և 8 սև, անձնափոխանորդ Աթաբէգեանը 24 սպիտակ։

◆ Գանձակում եղել են սիբիրախտի դէպքեր։

◆ Քութայիսում խուզարկվել է «Մնատօբի» Թերթի խմբագրութիւնը։ Խուզարկողները տարել են բոլոր Թղթերը և ձերբակալել են երկու աշխատակիցներին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արքունական Թատրոնում

Նոյեմբերի 4-ին օպէրային խումբը՝ երկրորդ անգամ այս սէզօնին՝ ներկայացրեց «Հրէուհի» օպէրան։

Հաաքելի դերակատար երգչուհի Ալէշկօ նորից հաճելի տպաւորութիւն Թողեց Թէ իր երգով և Թէ խաղով, որի համար և արժանացաւ բուռն ծափահարութիւնների ու ստացաւ մի գեղեցիկ ծաղկեփունջ։

Հրէայ Եղիազարի դերը յանձնված էր երգիչ Պօլէվօյին, որը, ինչպես յայտարարվեց բեմից, հիւանդ լինելով, անկարող եղաւ գոհացուցիչ տպաւորութիւն Թողնել։ Չորրորդ գործողութեան մէջ Պօլէվօյին փոխարինեց երգիչ Լազարեվ, որը Եղիազարի սրտաշարժ արիան երգեց շատ վգացված և վաստակեց ներկայ հասարակութեան երկարատև ծափահարութիւնները։

Կարդինալի դերում Սերգէեվին բաւարար կարելի էր համարել։

Մնացած դերակատարները՝ օր. Կարտանովիչ (պրինցուհի), Կարատով (պրինց), Լիւբչէնկօ (Ռուջիէրօ) տպաւորիչ չէին իրանց ստանձնած դերերում։

Թատրօնում բաւականաչափ հասարակութիւն կար։ X.

Գրական-Գեղարվեստական սալոնում

Վ. Կոմմիսարժեվսկայայի և Չէխովին նուիրված երեկոյթը նոյեմբերի 4-ին գրաւել էր շատ մեծ բազմութիւն։ Երեկոյթի ծրագիրը չափազանց ընդարձակ լինելով՝ տևեց կէս գիշերից էլ անց։ Ներկայացուցիչներ էին ուղարկել օպէրան, յանձին պ. Մօզժուխինի, և ռուս դրամատիկ խումբը տ. Լիւբչենկօյին։ Ներկայ էին տեղական երաժշտ.-գրական դէմքերից շատերը անխտիր ամեն ազգերից։ Հանդէսը բացեց պ. Ալ. Լօսևը՝ խօսելով Կոմմիսարժեվսկայայի մասին և տալով նրա քարակտերիստիկը։ Չեխովի «Чайка»-ն կարդացվեց և խօսվեց նրա ու տաղանդաւոր դերասանուհու մասին։ Այնուհետև արտասանվեցին ոտանաւորներ և եղաւ նուագածութիւն ու երգեցողութիւն։ Հ—ան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պետերբուրգում եկող ձմեռ կազմակերպվելու է Կովկասի հարստութիւնների, արդիւնաբերութեան, գիւղատնտեսութեան և ջրաբուժութեան ցուցահանդէս։

◆ Ռուսաց բարձր շրջանները չափազանց գոհ են Կօկօվցէվի զուտ նացիօնալիստական ոգով արտասանված ճառերից։

◆ Ներկայ Պետական Դումայի լիազօրութիւնները լրանում են 1912 Թ. մարտին։ Ապրիլին սկսվելու են 4-րդ Դումայի ընտրութիւնները։

◆ Արաբների յարձակումները շարունակվում են Տրիպօլիսում։ Թիւրքաց տեղեկութիւնների համաձայն պատերազմը տևելու է մինչև գարուն։

◆ Իտալական կառավարութիւնը հերքում է այն տեղեկութիւնները, Թէ մեծ պետութիւններից մի քանիսը արգելել են Իտալիային նաւատորմը պահել Եգէյեան ծովում։

◆ Աւստրիան համոզում է Թիւրքիային համաձայնել Տրիպօլիսի գրաւման բռնութեան, որովհետև մեծ պետութիւնները անկարող են պաշտպանել Թիւրքիային Թշնամու ծովային յարձակումներից։

◆ Դարդանելում ծովային ճակատամարտը Իտալիայի և Թիւրքիայի միջև անխուսափելի է դառնում։ Եթէ կռիւը սկսվի, երկիւղ կայ՝ որ իտալական սուրջրեայ նաւերը ամբողջովին կը ոչնչացնեն Թիւրքական նաւատորմը։

◆ Թիւրքիան իր ռազմամթերքը ստանում է պատերազմի համար Եգիպտոսի վրայով։

◆ Ալժիրում արաբները կոչերով յորդորում են կոտորել քրիստոնեաներին։

◆ Խօսում են, որ իտալական ռազմական նաւերը իրանց գործողութիւնները Եգէյեան ծովում սկսել են վաղվանից։

◆ 50,000 արաբներ երդվել են մինչև արեան վերջին կաթիլը կռուել իտալացիների դէմ։

◆ Լուրերի համաձայն, Տրիպօլիսում գործող Թիւրքաց զօրքերի ընդհանուր հրամանատար է կարգվելու զինուորական մինիստր Մահմուդ Շէվքէթ փաշան։

◆ «Իկդամը» հաղորդում է, որ իտալացիները գրաւել են Ղումքալէսին՝ Դարդանէլում։

◆ Մեծ պետութիւնները վաղաժամ գտան Թիւրքիայի բողոքը Տրիպօլիսը գրաւելու դէմ։

◆ Աւստրիան շարունակում է իր զօրքերը կենտրոնացնել Նօվօ-Բազարի սանջակի սահմանին։

◆ Թիւրքիան զինում է Եգէյեան կղզիների բոլոր բնակիչներին։

◆ Հակառակ լրագրական հերքումների, հաստատ տեղեկութիւն կայ, որ Բալկանեան ֆեդերացիայի գործը իրականանալու մօտ է։

◆ Հէնրիխ Սէնկէվիչը ապաքինվում է իր վէրքից։ Լուրերի համաձայն, որսի ժամանակ մենամարտ է եղել նրա և աբեղայ Խէլլիցկիի միջև։

◆ Թէհրանում տեղի ունեցաւ բազմամարդ միտինգ Թիւրք-իտալական պատերազմի դէմ։ Խօսեցին հայ և մահմեդական հռետորներ։

◆ Տեանցզինից ռուսական հիւպատոսը մի զօրաբաժին ուղարկեց Պէկին ռուսական դեսպանատունը պաշտպանելու համար։

◆ Մօնգօլիայի իշխանները դիմեցին հարաւային Մանջուրիայի ճապօնական իշխանութիւններին խնդրելով իրանց զէնք հայթայթել և աջակցել Մօնգօլիայի աւտօնօմիայի վերականգման։ Դեռ պատասխան չէ ստացվել։ Մօնգօլները փութանակի զինվում են։

◆ Չինական պալատը ներկայումս պաշտպանում են 80,000 զինուորներ։

◆ Յեղափոխականների հոսանքը դէպի Պէկին շարունակվում է։

◆ Ճապօնացիները իրանց զօրքերը մօտեցրել են Մուկդէնին։

◆ Մուկդէնը յայտարարվեց կենտրօնատեղի յեղափոխութեան համար Մանջուրիայում։

◆ Մուկդէնը յայտարարվեց աւտօնոմ։

◆ Չին յեղափոխականները շարունակում են իրանց գրաւումները Չինաստանում։

◆ Պէկինի հիւպատոսարանը Թոյլ տուեց յեղափոխական զօրքերին փոխարինել Տանխայ-Նանկին երկաթուղագծով։

◆ Պէկինում դրութիւնը անյուսալի է։ Միակ փրկութիւնը հիմնադիր ժողով գումարելն է և մեծ պետութիւնների միջամտելն է։

◆ 100,000 յեղափոխական մօտենում են Նանկինին։

◆ Ճապօնիան պաշտօնապէս յայտնեց, որ խոչընդոտ կը լինի չինական հանրապետութիւն հաստատելուն։

◆ Իւրիեվի համալսարանից արձակվեցին 252 ուսանող ուսման վճարը չը տալու համար։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

4 Նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դումային ներկայացվեցին օրինագծեր Աստրախանի, Ստաւրօպօլի և Օրէնբուրգի նահանգներում զեմստվօ մտցնելու և պետական գանձատուն յաւելեալ 10.500,000 ռուբլին Սև-ծովի նաւատորմի կառուցման համար գործադրելու մասին։

Նահանգական դատարանը «Бирж. Вѣд.»-ի խմբագիր Վասիլևվին և աշխատակից Սաեմբոյին դատապարտեց $2^1/_2$ ամսով բանտարկութեան Դումայի անդամ Օբրազցովին զրպարտելու համար։

ԲԵՐԼԻՆ։ Մետաղաձուլական գործարանների միութիւնը որոշեց պաշտօնից արձակել բանուորների $60^0/_0$-ին։ Արձակվելու են 70,000 հոգի։

ՆՈՎՕՉԵՐԿԱՍԿ։ Եօթն զինված մարդ Բօգաևսկայա կայարանում «Надежда» առևտրական տնից յափշտակեցին 18,000 ռ.։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինօվսկայա փողոց, № 8.
(կ. հ.) 416. 100—52

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնովսկայա փողոց, № 16.
Տէլէֆօն № 40.
(ե. ու. կ.) 220. 100—95

ԲԺԻՇԿ
Ց. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտօվսկայա, № 66.
(ա. օ.) 1035. 100—10

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և սեռական-ամորձային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(ա. օ.) 669. 100—63

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տէլէֆօն 388.
(չ. ու. կ.) 761. 100—38

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս (606), միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- ($12^1/_2$—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Աղքատաց համար՝ 2—3 ժ. ցեր.
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ առ. ժ. 9—10-ը։
Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (տնկին Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆօն № 1175.
(ե. հ. կ.) 888. 100—25

ԲԺՇԿՆ. ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Սրսկումն, բուժումն, մասսաժ, էլեկտրականութիւն, մարմնամարզութիւն։ Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրօնիքական տրիպէրի, սեռական Թուլութեան, անկարողութեան և սերմնահոսութեան—ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և բժիշկների հասցէներ։ Կարելի է ստանալ իմ կազմած «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարանը», գինը 50 կոպ., ճանապարհածախսը 15 կ.։ Հասցէս. Тифлисъ, Семеновская ул., № 9. Ընդունելութիւնը 3—5 ժամը երեկոյեան։
(ե. հ. կ.) 892. 50—23

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Գուտտենբերգ“

Գրավաճառանոցում վաճառվում են՝

«Աննա Կարենինա», 2 հատոր, Տօլստոյի, Թարգմ. Օտեանի	1 ր.	50 կ.
«Պայքար», վէպ Նար-Դոսի	—	75 »
«Հայոց եկեղեցին», Օրմանեանի	1 »	50 »
«Համապատում», Օրմանեանի	3 »	50 »
«Հայոց պատմութիւն», Հ. Տէր-Աստուածատրեանի	— »	50 »
«Եօթն իմաստասէրներ», Ն. Յովհաննիսեանի	1 »	—
«Բիւզանդեայ պատմութիւն», Յակ. Տաշեանի	1 »	—
«Աբդիւլ-Համիդ և Շէրլօք Հոլմս», Ե. Օտեանի	—	60 »
«Տէրն ու բանուորը», Տօլստոյի, Թարգմ. Խան-Ազատի	—	20 »
«Չար մարդու վերջը», Ղ. Աղայեանի	—	30 »
«Հայաստանի քարտէզը», Վարդանեանի	5 »	50 »
«Կեանքը ծովերի խորքում»,	—	30 »
«Միամիտի մը արկածները», Զիֆթէ-Սարաֆի	—	70 »
Մուրացանի երկասիրութիւնները, ա. և բ. հատոր	3 »	—
«Պատմութիւն հայոց գրականութեան», Փափազեանի	1 »	50 »
«Շիրինենց Նախշունը»,	—	80 »
«Հայուհին», վէպ	—	50 »
«Մանկական պարտէզ», Արզումանեանի, հայ ընտանիքների համար	3 »	
«Հայերը Մօլդաւիայում».	—	80 »
«Գուտտենբերգի կենսագրականը»,	—	40 »
«Բնական պատմութիւն», Ն. Սարգսեանի, մ. ա. և բ.	1 »	10 »
«Հայաստանի պատմութիւն», Խան-Ազատի և Վարդանեանի, ա. և բ. մաս	1 »	10 »
«Սօկրատ և իր կինը», Եգիկեանի	—	25 »
«Նախամարդու կեանքը»	—	25 »
«Դասագիրք պատմութեան», Միրիմանեան և Թումանեան	—	50 »
«Դարվինիզմ», Բալաղեանի	—	50 »
«Սալբի», ազգային վիպասանութիւն, Րաֆֆիի	3 »	— »
«Վէրք Հայաստանի», Աբովեանի	—	50 »
«Սիֆիլիս, վարակ. պաշտպանվելը», բժ. Մուրադեանի	—	80 »
«Յարութիւն», Տօլստոյի, Թարգ. Տ. Յովհաննիսեանի	1 »	50 »
«Առանց դաւանանքի», Սենկէվիչի, Թարգմ. նոյնի	1 »	50 »
«Երեսնամեակ Հայոց Բարեգործ. Ընկերութեան»	1 »	—
«Լուռ ցաւեր», Զօհրապ	—	60 »

Դիմել հետևեալ հասցէով՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ», Г. И. Галустяну.
1054. 1—1

ՀՕՆՕՐՐԷԻ (ՏՐԻՊՊԷՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO-ՊԻՉԻԼԻՆ“
ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է իբրև հաստատուն միջոց։ Գործադրելու ձեռնարկը կցված է արկղիկին։ Իւրաքանչիւր մեծ դեղատներում, հատը 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ յաւ է, ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ բորբոքը։
ՊԱՀԵՍՏԸ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека Б. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախքը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։
(կ.) (П.12474) 0 39

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
Վաճառվում են հետևեալ գրքերը.
Գար. վ. Յովսէփեան, «Մագաքիա արք. և Օրմանեան և կաթ. ընտր.» 10 կ.
Չէրքէզեան, «Օրմանեանը զրպարտութեան ցանցերում». 30 կ.
Եր. Տէր-Մինասեան, «Կարապետ եպ. Տէր-Մկրտչեան». 25 կ.
Բարգուզիմ. եպ. «Կաթող. ընտրութ.» 25 կ.
Ա. Ահարոնեան «Խաւարի մէջ». 60 կ.
» «Անդունդը». 40 կ.
» «Մոխիրների տակից». 40 կ.
Բօկլ, «Անգլիայի քաղաքակրթ. պատմ.». 85 կ.
Ն. Ֆրանգեան, «Նիցշէ և նրա փիլիս.». 20 կ.
Լ. Տօլստոյ, «Մարդիկ ինչով են ապրում» 20 կ.
» «Մանկութ. և պատանութ.» 1 ր. —
«Զուարճալի գրօսարան կամ կրթական փիճակախաղեր». 1 ր. 30 կ.
Խ. Տ. Ց., «Մաղրածու». 50 կ.
» «Ծաղկեփունջ». 50 կ.
Կենտրօնական գրավաճառանոցում վաճառվում են նաև հրապարակում գտնված բոլոր հայերէն և ռուսերէն դասագրքերը։ Դիմել՝ Тифлисъ, Центральной книжной торговлѣ. (կ. հ.) 1058. 2—1

ՆԿԱՐԻՉ
ԱՌԱՔԵԼ ՍԱԳԻՆԵԱՆՑ
(Նախկին ուսուցիչ Գէորգեան ճեմարանի և Էջմիածնի նկարիչ)
Ընդունում է գուտ հայկական ճաշակի՝ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ, ԽԱՉՎԱՌՆԵՐԻ, ԽԱՉԿԱԼՆԵՐԻ, նոյնպէս և ՊՕՐՏՐԷՏՆԵՐԻ ու ԴԵԿՈՐԱՑԻԱՆԵՐԻ պատուէրներ հաւասար պայմաններով։ Հասցէն՝ Тифлисъ. Красильная ул., ограда церкви св. Георгія (на Майданѣ).
(ա. օ.) 1047. 14—4

ОСТЕРЕГАТЬСЯ ПОДДѢЛОКЪ!
ПРОВИЗОРА
Г. Ф. ЮРГЕНСЪ
БОРНО-ТИМОЛОВОЕ МЫЛО
ОТЪ ПОТА, ЗАГАРА, ВЕСНУШЕКЪ, УГРЕЙ, ПРЫЩЕЙ И ЖЕЛТЫХЪ ПЯТЕНЪ.
БЛАГОВОННОЕ ТУАЛЕТНОЕ МЫЛО ВЫСШАГО ДОСТОИНСТВА
ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ
1/1 кус. 50 к. 1/2 кус. 30 к.

Золотая медаль Лондонъ 1893 г.
Главный складъ у Г. Ф. Юргенсъ, Москва
(М. 5195) 57. 24—16

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ
քախիտի, խլացաւի, արեան պակասութեան և այլ հիւանդութիւնների, նոյնպէս և երկարատև քաշքշող հիւանդութիւնների ժամանակ տալ պրօֆէսսօրների և բժիշկների կողմից յանձնարարված մաքրած Դրէգելի
ԵԿՕՐՕՖՕՍՖԻՏԸ։
(կ.) (П. 119271) 1018. 4—4

ԾԱԽՎՈՒՄ Է
Մ Ե Ղ Ր
Ս. Մխիթարեանի մեղուանոցից
Գինը՝ 25 կ.։ Մի քանի պուդ գնողներին՝ զիջումն։
Սէրգէյօվսկի պերէուլոկ, № 5. (Օլգինսկայա փողոցի մօտ)։
(ե. հ. կ.) 1011. 12—9

Եղբ. Աւագիմօվների
այգին բաց է Թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ չափաւոր գներով։ Կատալօգները ուղարկվում են ՁՐԻ։ Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.), Авсаркисову.
(չ. ու. կ.) 1045. 15—3

Լոյս տեսաւ
Մ. ՉՄՇԿԵԱՆԻ
1912 Թ.
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ
Վաճառվում են Կովկասի քաղաքների նշանաւոր գրավաճառանոցներում և Թղթեղէնի յայտնի խանութներում։ Մեծ քանակութեամբ ցանկացողները, ժամանակին ստանալու համար, Թող վաղօրօք ուղարկեն իրանց պատուէրները։ Վերադիր վճարով ոչ ոքի չեն ուղարկվում։
Հասցէն՝ Թիֆլիս, Գարայեվսկի № 5.
МАКАРУ ЧИМИШКЯНУ—Մ. ՉՄՇԿԵԱՆ
(կ. հ.) 1036. 10—3

Блокеръ Какао
ԹԷՅԻՑ ԵՒ ՍՈՒՐՃԻՑ ԱՌԱՒԵԼԱԳՈՅՆ
ՈՉ ՄԻԱՅՆ ԻՐ ԴՈՒՐԵԿԱՆ ՀԱՄՈՎ,
ԱՅԼ ԵՒ ԻՐ ՍՆՆԴԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ։
Վաճառվում է կօլօնիալ գեղատնային ապրանքների բոլոր խանութներում։
ԹԻԹԵՂԷԱՅ ԱՐԿՂԻԿՆԵՐՈՒՄ 1/1, 1/2, 1/4, 1/8 Ֆ.։
Գլխաւոր պահեստը՝ Առևտրական Տուն «ԵԱՎԱ», Ս.-Պետերբուրգ, Մօրսկայա, 38.
(20, դ. 11, 25, յ. 8, 22) (П. 118830) 1019. 6—1

ՃԱՄՓՐՈՒԿՆԵՐ (чемоданы) ԳԼՕՏՐՕՏԷՐ
ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԾԾՄԲԱՑՐԱԾ
ՄԿԱՆԱԹԵԼԻՑ ԳՈՐԾՎԱԾ ԿՏՈՐԻՑ
ԿԱՇՈՒՑ ԱՄՈՒՐ
ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԿՕՇԿԵՂԷՆ
„ԳԱՆԱՆԱ“ ՖԻՐՄԱՅԻ
Վաճառվում է Ռուսաստանում միայն **ԵՂԲ. Ա. ԵՒ ԵԱ. ԱՃՅԱՆԳԻ** խանութում
Թիֆլիսի բաժանմունքը—Դվօրցօվայա փողոց, տէլէֆօն № 477.
(հ. կ.) 1050. 3—2

ԴԵՐՁԱԿ
Ա. Ն. ՄԱԼԵԱՆՑԸ
Փոխադրվել է Երևանեան հրապ., Խարազովի տունը, Քաղաքային Փոխատու Վարկի Ընկերութեան շարքում։
ԱՇՆԱՆ եւ ՁՄԵՌՎԱՅ սէզօնի համար ստացված են բացառապէս
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿՏՈՐՆԵՐ
Ընդունվում են պատուէրներ քաղաքացիական և պաշտօնական զգեստների։
(հ. կ.) **ԳՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ ԵՆ** 1028. 5—5

ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
Իզմայլօվսկի պր., № 27
Պարիզ 1900. **ՈՍԿԷ ՄԵԴԱԼՆԵՐ** Նիժնի-Նովգօր. 1896.
BEAUTÉ DU TEINT
EAU DE LYS DE NINON
ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ԿԱԹ—ԻՐԻՍԻ ԿԱԹ
Փափկացնում են կաշին և դարձնում նրան քնքոյշ և Թաւշանման։
Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами—Тифлисъ, Баку, Батумъ.
526. 7—6

ХИМИЧЕСКАЯ
С.-ПЕТЕРБУРГСКАЯ
ЛАБОРАТОРІЯ
ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.